56 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 15

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 15 № 56

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարջայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է մէայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարգար, Լևոն, Մարիամ Եօջամիրեանցները և Թուտիկա Յակոբեանցը յաւօք սրտի յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առաջինը իր դստեր, երկրորդ և երրորդն իրանց քրոջ, իսկ չորրորդն իր եղբօր աղջկայ՝

ԿԱՐԻՆԷ ԽՕՋԱՄԻՐԵԱՆՑԻ

մահը, որ պատահեց ամսիս 13-ին։ Ամփոփքն այսօր, հինգշաբթի, երեկոյեան ժամի 6-ին, թաղումը ուրբաթ օր, ամսիս 16-ին, առաւօտեան ժամի 10-ին, ղէպի ս. Կարապետ եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անատասէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երեքեակ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետեւեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։

Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։

Ս. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։

Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ուսիկովը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկո-միկրոսկոպական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստումն և այլն։

(հ. չ. հ.) 16—50

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—մէզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեքտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ե. ԱԽԵՏԻՄԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբերձութիւն։

Ս. Ա. ԼԻՒԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի։

Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Գ. Ա. ԲԷՅԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբերձութիւն։

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկոպական, բակտէրիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկաստուգիչ և ծծմայրերի ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կօպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բավական է ընդհանուր անհանգիստներից և առանձին սենեակներից։

առ. ե. հ. կ. 4—100

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

քթի, կոկորդի եւ ականջի

հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—3 ժ. ամեն օր բացի երեկ. 5—7 ժ. ցի ուրբաթ

Միխայլովսկի պրոսպ., տ. Ֆօրբերի № 11.

(կ. չ.) առ. 27—60

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.։

Սօլոլակ, Բեհբութեան փող. № 33։

(ա. օ.) առ. 18—100

ԷՄՄ. ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Նոր գրքոյկներ

I. Լեւ Տօլստոյի գրուածքներից՝ հեղինակի պատկերով

1. «Աղօթք», 8 եր. 5 կօպ.։
2. «Սէր», 16 եր. 8 կ.։
3. «Սեռային յարաբերութիւն», 30 եր. 12 կ.։

II. Պրոֆ. բժշ. Լէօ Բուրհերշտէյն՝

1. Առողջապահիկ կանոններ՝ բոլոր ուսումնարանների աշակերտների ու աշակերտուհիների համար 20 եր. 7 կ..

Դիմել՝ 1. Москва, свящ. Э. Назарьянцъ. 2. Тифлисъ, Центральная Книжная Торговля 3. Баку, Книжный магазинъ «Сатрудникъ»։

Մօսկվայից դուրս միմիայն տասնեակներով են ուղարկվում, և ուզած գրքոյկից՝ գնողը վճարում է իսկական գնից 1 կօպ. պակաս։

Իսկ բոլոր 4 գրքոյկներից մի ասին գնողը իւրաքանչիւր 10-ին վճարում է 2 ր. 50 կ.։

Երկու դէպքումն էլ թարգմանողին դիմողը ճամփի ծախս չէ վճարում։

առ (հ. հ.) 6—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի հարցի առիթով. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Պետական Դումայի շուրջը. Պետական Դումայ. Մամուլ. Ժամանակակից լօզունգները. Մեր ՀՈՂԱպատը. Բանւորական շարժման մասին. Թատրոն և եւեժշտութիւն. Անհրաժեշտ պահանջ. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Արտաքին տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

I

Թէ կառավարութիւնը և թէ ազգողմեան կուսակցութիւնները մեղադրում են ժողովրդական ազատութեան կուսակցիներին այն բանի համար, որ սրանք խիստ քննադատութեան ենթարկելով կառավարութեան հաշածանքները, բանութիւնները, պատիժները և կախաղանները, ոչինչ չեն ասում յեղափոխականների կատարած բանութիւնների և սպանութիւնների դէմ։

Անցեալ Դումայում հանդէս եկաւ այդ մեղադրանքը, նա կրկնվեց և ներկայ երկրորդ Դումայի վերջին նիստում։ Ազգողմեան հռետորները ընդգծեցին, որ ժողովրդական ազատութեան պատգամաւորները լուութիւն են պահպանում այդ հարցի վերաբերութեամբ և դրանով կարծես հաւանութիւն են տալիս յեղափոխական գործողութիւններին։

Ինչումն է սակայն գաղտնիքը. ինչու՞ ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը լուութիւն է պահպանում։

Ինքը ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը գործում է ոչ յեղափոխական ճանապարհով, աշխատում է հասատել պարլամենտական գործունէութեան եղանակը և նուիրվել խաղաղ գործունէութեան։ Նա ամեն ջանք գործ է դնում խուսափելու այն քայլերից, որոնք կարող էին նկատվել իբր ոչ պարլամենտական արարքներ։ Եւ չը նայելով այդ հանգամանքին, նա ոչ մի ակնարկ չէ թոյլ տալիս իրան յեղափոխական գործունէութեան դէմ։

II

Եթէ աւելացնենք դրան և այն, որ ժողովրդական ազատութեան կուսակցները արին մի քանի համարձակ քայլեր և ստորագրեցին Վիբօրգեան կոչը, մենք կը հասկանանք թէ ինչու՞ ազգողմեանները և կառավարութիւնը անուանում են ժողովրդական ազատականներին ծըպտեալ յեղափոխականներ և աշխատում են ամեն կերպ սահմանափակել նրանց գործունէութեան արտայայտութիւնները։

Ի՞նչպէս բացատրել ժողովրդական ազատութեան բռնած դիրքը։

Դա այնքան էլ դժուար մի առեղծուած չէ։ Եւ ահա բացատրութիւնը։

Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը կանգնած է պատմական-քաղաքական հողի վրա և լաւ հասկանում է թէ Ռուսաստանը գտնվում է անցողական և յեղափոխական շրջանում։ Նա լաւ գիտէ, որ հին ըէժիմը թէև ձևականապէս յայտարարված է ոչնչացած, բայց իրապէս նա գոյութիւն է պահպանում և աշխատում է նորից ամրացնել իր խախտված դիրքերը։ Նա լաւ գիտէ, որ յեղափոխական շարժումը ինքնաստեղծ, ինքնանոյ, ինքնագոյ մի երեւոյթ չէ, այլ արդիւնք է հին ըէժիմի գոյութեան, հակադրական մի կռուան է հին ըէժիմի ճնշող այժի դէմ։

Իսկ դրանից ինչ է հետեւում։

III

Ահա ինչ։

Եթէ ինքը յեղափոխութիւնը բողոք է և միայն հետեւանք է որոշ ազդեցութիւնների, նա կարող է ոչնչանալ միայն այն ժամանակ, երբ կոչնչանան նրան պայմանաւորող և ստեղծող խաւար ազդեցութիւններ։ Ճիշտ է այդ բողոքը, այդ յեղափոխութիւնը ընդունում է յաճախ չափազանց սուր ու ծանր արտայայտութիւններ և հասարակութիւնը չարաչար մեծ զոհաբերութիւնների է ենթարկվում, բայց և այնպէս մարդիկ տանում են այդ բոլորը, սպասելով, որ վերանան այն խաւար ազդեցութիւնները, որոնց շնորհիւ առաջ է եկել բողոքը և դիմադրութիւնը։

Հասարակութեան վրա չափազանց թանգ նստեց յեղափոխութիւնը։ Ժողովուրդը թէ անտեսապէս, թէ բարոյապէս ծանր կորուստներ ունեցաւ և այնպիսի սոսկալի հարուածներ է ստացել, որ տասնեակ տարի է հարկաւոր կաղդուրվելու համար, բայց և այնպէս այդ ժողովուրդը շարունակում է իր մաքառումը հին ըէժիմի դէմ և այդ պատճառով բծախնդիր չէ դէպի մաքառման այն միջոցները, որոնց դէմ նա բողոքել է մշտապէս կեանքի սովորական ընթացքի ժամանակ։

IV

Ինքը Դուման մեր ասածների ապացոյց է։

Մինթէ Ռուսաստանի ժողովուրդը ընդարձակ տարածութեան վրա այնպէս ծայրահեղ հասկացողութիւնների տէր է, ինչպէս նրա ներկայացուցիչների մեծագոյն մասը նրա պատգամաւորական ժողովում, Պետական Դումայում։

Ի հարկէ ոչ։

Եւ սակայն Դումայի խմբերը մէկը միւսի առաջ աշխատում են մրցել ծայրահեղութեան մէջ, հաւատալով, որ այդպէս պէտք է ներկայացնել ժողովրդական կամքը։

Եթէ ռուս ժողովուրդը իր հասկացողութիւններով այնպէս ծայրահեղ չէ, ինչպէս նրա ներկայացուցիչները, նա ծայրահեղ է իր արամադրութեամբ և իր սպասելիքներով, նա ծայրահեղ է իր անվստահութեան մէջ դէպի հին ըէժիմը, նա ծայրահեղ է իր յուսախաբութեան և հիասթափութեան մէջ հին կարգի գործողների վերաբերութեամբ։

Եւ ահա ինչու՞ ժողովուրդը և նրա ներկայացուցիչները, որքան էլ դէմ լինեն յեղափոխական սարսափներին, բայց նրանց տանում են, իբրև բողոք այն աւելի մեծ սարսափի դէմ, որ կրում է հին ըէժիմ անունը և որը դեռ չէ ջնջվել իրականութիւնից։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 12 մարտի։ Նաւերի ծառայողների գործադուլը օրէցօր մեծ չափեր է ընդունում։ Դադարեցին երթևեկելուց պօստային և ճանապարհորդական շոգենաւերը։ Գործադուլին յայտնեցին Բիբի-Էյբաթից նաւթը գործարանային մաքր ատող բանւորները, որը ուրիշ կը ծառայէ Բիբի-Էյբաթի նաւթահանքերի կնդ ատելուն։ («Հ. Գ.»)

—

Ալէքսանդրոպոլ, մարտի 11-ին

Մի քանի օր սրանից առաջ պատահում են հետեւեալ դէպքերը։ Քաղաքային բանտի շուրջը ման եկող Բակինսկի գնդի ռուս պահապան զինուորի (часовой) վրա դիշերվայ մօտ ժամի 1-ին չորս անգամ հրացան են արձակում մթութեան մէջից։ Ձայնի վրա դուրս են թափվում հերթապահ զինուորները և որոգայթ լարելով, աշխողվում է 2 թուրքի բռնել, որոնք խոստովանվում են, հարց ու փորձից յետոյ, որ իրանք 7 հոգի են եղել և կարծել են թէ զինուորը հայ է, ուստի և աշխատել են սպանել, բայց մթութեան պատճառով չէ աջողվել։ Դրանց իսկոյն բանտարկում են։

Միւս օրը, գիշերը, նոյն տեղը, դարձեալ մի քանի անգամ հրացան են պարպում, այս անգամ կաքարդինան գնդի, դարձեալ ռուս զինուորի վրա։ Աշխողվում է 4 թուրքերից միայն մէկին բռնել, որը նոյն խօսքերն է ասում, ինչ որ երէկվայ իր ընկերներն էին ասել. դրան ևս բանտարկեցին...

Մարդ միանգամայն մռում է ապշած. ի՞նչ են արել դրանց հայ զինուորները. թող մէկը քաջութիւն ունենայ դուրս գալ և մատնացոյց անել մի որևէ հայ զինուորի վատ արարքը։

Եղանակները տաքանում են. մի արշինաչափ ձիւնը կամաց-կամաց հալվում է, գոյացնելով սարսափելի ցեխ, որը և փողոցներով անցնելն անհնարին է դարձնում կանանների բացակայութեան պատճառով, իսկ քաղաքային վարչութիւնը փայլում է իր անտարբերութեամբ...

Ար. Մամեանց

—

Նուխի, մարտի 10-ին

Ինչպէս յայտնի է բոլորին, Նուխու հայոց ծխական ուսումնարանը փակվեց հոգարարձու պ. Ալէք. Նախիջեւանի շնորհիւ։

Վերջապէս այսօր, ամսիս 10-ին, մեր ուսումնարանը դարձաւ նաև «կազարմա»։

Մօտ 600 զինուոր, որոնք անցնելով Նուխի քաղաքով՝ գնում էին դէպի Զաքաթալա քաղաքը, իջևանում են Նուխու ծխական ուսումնարանում, ուր պէտք է մնան 5 օր։

Ցայս չը դնելով Նուխու հայ ժողովրդի վրա, որոնք բաժանվելով զանազան կուսակցութիւնների՝ Ալիքական, Վահանական, Աբսէնական, և այլն, և այլն... խնդրում ենք օտար երկրում ապրող նուխեցի ընակիչներին ձեռք առնել միջոցներ, Նուխու հայոց ծխական ուսումնարանը բանալու համար։

Պետրոս Աղամալեան

—

Բելօստոկ, 13 մարտի։ Փողոցով անցնող ժամանակաւոր գեն.-նահանգապետ Բօգաեվսկու վրա ռումբ նետվեց։ Ուժեղ պայթումից կորտվեցին մօտակայ տների պատուհանների ապակիները։ Բօգաեվսկին անվնաս է, կառապանը ստացաւ քերծուածքներ։ Ցանցաւորը փախաւ։ («Հ. Գ.»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Խանքենդ աւան, 9 մարտի—Շուշու գաւառի գաւառապետ Գերասիմովը պաշտօնակատարում է։ Կարճ ժամանակում մենք փոխեցինք մի քանի գաւառապետներ։ Գաւառապետ, առհասարակ, նշանակվում են զինուորականներից, գոնէ մեզանում վերջին ժամանակներս եկածները, իբրաւ յետոյ զինուորականներ էին։ Շուտ շուտ նոյնորը գաւառապետներ տեսնելով հարկաւ այնքան էլ հետաքրքրական մի բան չէ հաղորդել ընթերցողներին, որ այս ինչ անձը պաշտօնակատար եղաւ, և նրա տեղ այս ինչը եկաւ, որովհետև դրանք ամենքն էլ մի գոյն, մի բնաւորութեան, միևնոյն գործողութիւն ցոյց տուող անհատներ են ներկայացնում, մի շիլայում, միևնոյն ուղղութեամբ զարգացած, դաստիարակված անհատներ։ Սակայն Գերասիմովի պաշտօնակատարելը ունի իր առանձնակի հետաքրքրութիւնը, որ բարւոք համարեցի հաղորդել ընթերցողներին։

Երկու տարի է շարունակ լսում էինք, որ այս կամ այն գաւառապետը, այս կամ այն մարդուց այսքան կաշառք պահանջեց, նրա գործին լաւ ընթացք կամ զեկուցում տալու։ Այդ մարդիկ կաշառատուներ էին, որոնց վրա մեր հարևան թուրքերը բարկել էին, թէ նրանք յեղափոխականներ են, կազմել են ջարդեր, կրակել են այս կամ այն թուրքական գիւղը։ Եւ կաշառատուները բերդարգելութեան դաժան կեանքից ազատվելու համար կատարում էին գաւառապետների պահանջը։ Այսպիսի և սրբոյ նման փաստեր որքան կուզէք կան, սակայն այս ամենը դատաքննութեան ժամանակ լիովին արժէք ունին։ Ոչինչ։ Բողոք լինելուց դեռ ևս հայի ճակատին գրոշմում էին գարշելի «кляузный» բառը։ Վերջին ժամանակներս մեր գաւառից պաշտօնակատար եղած, կամ դանդաղ տեղեր փոխադրված պրիստաւները և գաւառապետները եղել են թուրքերի պահանջմամբ։

Փետրվարի 4-ին սպանվեց փոխ-գնդապետ Զօլատարեւը, որի մասին բաւական գրվեց «Մշակ»-ում։ Գաւառապետ Գերասիմով եկաւ Խանքենդի, ապա այստեղից արագ գնացքով գնաց Աղդամ, որտեղից չարագործներին։ Նա այնտեղ շարունակ ձերբակալում էր մարդկանց և կանանց և ապա մի քանի օրից յետոյ արձակում, այնպէս որ երկարաւան ձերբակալութիւններից յետոյ նա դրանց ոչ մի հետեւանքի չը հասաւ և չը կարողացաւ գտնել Զօլատարեւի սպանողներին և արձակից բոլոր ձերբակալվածներին։ Այժմ ասում են, որ նա բոլոր ձերբակալվածներից ժողովել է մի քանի հազար բուբլի կաշառք, որի համար և պաշտօնակատար է եղել։ Ասում են, որ Գերասիմովը խնդրել է իրան դատի տալ, իրանից հեռացնելու այդ ծանր արաբը, որովհետև ինքը կաշառ չէ կերել և արդար է։ Թէ Գերասիմովը կաշառակեր է, թէ ոչ, այդ հետաքրքիր բան չէ, սակայն հետաքրքիրն այս է, ով է եղել այն համարձակը, որ Աղդամում կատարվածների իրական պատկերը ներկայացրել է գեներալ նահանգապետին։ Որ Զօլատարեւը սպանված է թուրքերի ձեռքով, այս արդէն փաստ է, թէև հայերն էլ այս մասին տուգանքներ վճարեցին, բայց թէ ինչու՞ մինչև այսօր չարագործները երեսն չը հանվեցին, ահա հանելուկը, որի պատճառով և պաշտօնակատար եղաւ գաւառապետ Գերասիմովը։ Թէ Գերասիմովը յանցաւոր է Զօլատարեւի սպանողների հետքը ծածկելում, այս դեռ չէ ապացուցված, բայց որ տակաւին չեն գտնված նրան սպանողները, այս փաստ է։

***

—

Խանդենդ-աւան, 7 մարտի։ Անցեալ տարի Փոխարքայի պալատում կայացած թուրք և հայ պատգամաւորների ժողովում կայացել էր և այս որոշումը, որ թուրք տեղերում ընակվող հայերին փոխադրել հայաբնակ տեղերը և ընդհակառակը հայաբնակ տեղերում բընակվող թուրքերին տեղափոխել թուրքաբնակ տեղերը։ Այս որոշումը ոչնչով չիրականացաւ։ Խանքենդի գործակալութեան մէջ գտնվող Ալիղուլի և Հարաբ գիւղերը 1905 թուին իսպառ զրօնջվեցան, իսկ կենդանի մնացած բնակիչները [illegible] մեծ մասը եկան Խանքենդի։ Անցեալ տարի ձմեռվայ սկզբում գեներալ-նահանգապետի հրամանով դրանց մի մասը արտաքսվեց Խանքենդից, իսկ միւս մասին էլ այժմ հրամայված է վերադառնալ իրանց նախնական բնակութեան տեղերը—Ալիղուլի և Հարաբ։ Ժամանակ որոշված է մինչև մարտի 12-ը, այնուհետև կը վռնտվեն ոյժով։ Ով մի անգամ տեսել է Ալիղուլին և Հարաբը, նա երբէք չի վստահանայ նորից վերադառնալ այնտեղ և առն շինել, վար ու ցանքով և անասնապահութեամբ պարապվել։ Նրանց չորս կողմերը բնակված են թուրքեր և քրդեր, խաւար, յետամնաց ազգեր, կատարելագործված վայրի աւազակութեան ու մարդասպանութեան մէջ։

Ձմեռն անցաւ խաղաղ և չէր կարծվում թէ որևէ նոր փոթորիկ կը բարձրանայ, և ալիղուլեցիներն ու հարաբցիները այնքան վստահ էին, որ պատրաստվել էին վերադառնալ իրանց տեղերը, սակայն վերջերս կատարված մի քանի սպանութիւնները, ու դրանց դէմ կառավարութեան պաշտօնեաների բռնած ընթացքը նորից ապացուցեցին, որ ժողովուրդը խաղաղասիրված չէ և արդարադատութիւնը դեռ հնմարտութեան հիմքերի վրա չէ կանգնած։ Ահա այդ պատճառներից հարկադրված՝ այն գիւղացիները փոխել են իրանց միտքը և չեն ուզում վերադառնալ իրանց տեղերը։ Այսպիսի պայմանների մէջ, ասում են նրանք, ընդհարումը անխուսափելի է, իսկ ընդհարումը սկսվելուց ետ այնտեղ բնաջինջ կանեն։ Մեր հայ պատգամաւորները Փոխարքայի պալատում շատ փքուն ճառեր խօսեցին, իդէալական մտքեր շօշափեցին, բայց իրօք ոչինչ չարին և այսօր ալիղուլեցիներ և հարաբցիներ չեն իմանում թէ իրանց վախճանը ինչ է լինելու, հաստատուն տեղ չունեն, որ իրանց համար տուն շինեն, անտեսութիւն ձեռք բերեն։ Նրանք ժողով արին և որոշեցին նախ նորից խնդրել կառավարութիւնից իրանց թողնել Խանքենդում, իսկ եթէ այդ անհնարին լինի, այն ժամանակ ցրվել Խաչենու գիւղերում, ամեն մի գիւղի 3—5 ծուխ տալով։ Նրանք որոշեցին չը վերադառնալ իրանց բնակութեան տեղերը։

***

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Պետական Դումայի բաժինների քարտուղարների և նախագահների երկրորդ նիստում, բոլոր բաժինների գործունէութիւնը միացնելու նպատակով, ընդունվեցին հետեւեալ որոշումները. ընտրութիւնները բեկանելու համար ժօքալ պատճառներ ընդունել չէնօՖիկների՝ իրանց շրջանում գործադրած ճնշումը և հոգեորականութեան՝ քարոզելու ճանապարհով կատարած ազդեցութիւնը. սենատի բացատրութիւններին հակառակ ընտրութիւնների դէմ գանգատները ստանալու դէպքում անհետևանք թողնել այդպիսի գանգատները. բաժինների զեկուցման ժամանակ քննադատեան ենթարկել սենատի մեկնաբանութիւնները։

Խորհրդակցութիւնը ժերժեց—խնդրել արդարադատութեան մինիստրին, ինչպէս գեներալ-դատախազին, ցոյց տալ սենատին, որ նա սխալ է վարվել—ընտրութիւնները կատարելու վերաբերեալ բացատրութիւնները հրատարակելու ժամանակ։

Սօցիալ-յեղափոխականների, աշխատաւորականների և ժողովրդական-սոցիալիստների ֆրակցիաների կոմիտեներից կազմվում է մի բիւրօ «հողի և ազատութեան դաշնակցութիւն» անունով՝ բոլոր երեք ժողովրդական ֆրակցիաների եթէ ոչ միացման, գոնէ բլոկ կազմելու խնդիրը մշակելու համար, որով բլոկի մէջ մտնող ֆրակցիաներից իւրաքանչիւրը, որին յոյս կայ յարել և ձախակողմեան անկուսակցականներին, պահում է իր աւտոնոմիան, կուսակցական գոյնը և կուսակցական հայեացքների տեսակէտից հարկաւոր դէպքերում ինքնուրոյն կերպով պարզաբանվելու իրաւունք։

Գիւղացիական համահաւասարութեան սահմ. ռամկ. մանաժողովը, պատգամաւոր Բուլգէին նախագահութեամբ, քննելով 1906 թ. հոկտեմբերի 5-ի օրէնքը, գտաւ նրան լիովին ընդունելի և վճռեց Պետական Դումա մտցնել սոսկ մի քանի ուղղումներ և լրացումներ, որոնք ընդլայնելու են օրէնքի նշանակութիւնը։

Սահմանադիր-ռամկավարների կենտրոնական կոմիտէի նախագահ ընտրվեց Միլիւկով, օգնականները—իշխան Դմիտրից Շախովսկի և Նաբոկով։ Կենտրոնական կոմիտէի նախկին պրէզիդիումը այժմ ընտրվեց դումայական ֆրակցիայի պրէզիդիումի համար։

Սահմ. ռամկ. կենտրոնական կոմիտեում կանխաժամանակեայ դատաւ—մօտիկ ապագայում կուսակցութեան հինգերորդ համակազմական համագումար գումարելու խնդիրը։

Իրար վրա մեծ քանակութեամբ հարցապնդումներ անելուց խուսափելու համար. սահմ. ռամկ. պարլամենտական ֆրակցիան ընտրեց մի յատուկ ժանաժողով Իոսիֆ Հէսսէնի նախագահութեամբ՝ Դումա մտցնվող հարցապնդումները կարգի բերելու և քննելու համար։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Նիստը բացվում է առաւօտեան [illegible] խաղաղ Գօլովինը զեկուցանում է արդարադատութեան մինիստրի նոր մտցրած օրէնսգծերի, պաշտօնական անձանց յանցագործութիւնները քննելու համար 40 պատգամաւորների ներկայացրած յայտարարութեան, արդարադատութեան մինիստրի՝ 126 և 132-րդ յօդուածներով պատգամաւոր Գէրուսին և 128-րդ յօդուածով Կուզնեցովին քրէական պատասխանատուութեան ենթարկելու ժամին ներկայացրած զեկուցագրի մասին։ Ապա յայտարարվում է, թէ ինչ հետեւանք է ունեցել պետական ելեմուտը քննելու, ֆինանսական և նախահաշուի մանաժողովների ընտրութիւնը։

Շարունակվում են դաշտային դատարանները վերացնելու հարցի վիճաբանութիւնները։

Կրուպենսկին առաջարկում է դէմ կենալ ձախակողմեանների քարոզած և աշխողմեանների պաշտպանած սպանութիւններին։ Դաշտային դատարանները տրամաբանական հետեւանք են անիշխանական ահաբեկութեան, որ կատարում է նոյն իսկ երեխաներին։ Կան աւելի կարևոր հարցեր.—հրէական, լեհական, ազգային. նրանց պէտք է դիմել առաջին իսկ հերթին։ Չէ կարելի զեկավարվել այն լօզունգով՝ թէ հարցը դրված է թղթի վրա. կայ մի ուրիշ լօզունգ—խղճի լօզունգ (աջակողմեանները ծափահարում են, կենտրոնը և ձախակողմը՝ սուլում)։

Պետրովը, ձախակողմեանների մի մասի ծափահարութեամբ, զարդրյթ է յայտնում աջակողմեան ֆրակցիաներին, որոնք չեն դատապարտում դաշտային դատարանները։ Ինչպէս Դոնեան կազակ, նա սկսեց խօսել կազակների անունից։

Տեղերից վեր են թռչում Բօբրինսկին, Պուրիշկեվիչը և Աստրախանի կազակների ներկայացուցիչ Պոլիակովը և աղաղակում են։ «սուտ է, սուտ է, դուք իրաւունք չունէք խօսել կազակների անունից»։ Բօբրինսկին գոչում է. «ես օֆիցեր եմ, խնդրեմ չը վիրաւորել զօրքին»։

Նախագահը կարգը վերականգնելու երկար ջանքերից յետոյ, խնդրում է հռետորին չը շօշափել այն հարցերը, որոնք քննվող հարցին չեն վերաբերում։ Հռետորը շարունակում է և Դոնեան կազակների կողմից բողոքում է դաշտային դատարանների դէմ։

Պոլեակով աղաղակում է տեղից. «Բողոքում եմ հռետորի ճառի դէմ Աստրախանի կազակ ազգաբնակութեան անունից»։ Բողոքում է նաև աջակողմեանների ծափահարութեամբ Տերեքի կազակների ներկայացուցիչը։ Աջակողմեանների մի մասը դուրս է գնում դահլիճից։

Գոլդպոլով եռանդուն բողոք է յայտնում դաշտային դատարանների դէմ։ Ամբողջ ժամանակ դիմելով աջակողմեանների աթոռնե-

րէն և մինիստրների օթեակներին, հռետորը ասում է. «Ժամանակ է դադարել արիւն խմելուց, ինչպէս առաջարկում են. (աջակողմեանները բողոքում են և խնդրում են կանգնեցնում է հռետորին)։

Հռետորը ասում է. «Ես ինքս լսեցի Պուրիշկևիչի հրաւէրը։ Դիմում եմ ձախակողմեաններին։ Ռուս ժողովրդի հարստութեան, բարեաւաղութեան և ազատութեան գրաւականը ձեր ձեռքին է։ Դիմում եմ աջակողմեաններին, խորհուրդ եմ տալիս սիրել մերձաւորներին, ինչպէս ձեր անձը»։

Ճառերը 5 րոպէով սահմանափակելու առաջարկը մերժվում է. Նախագահը խնդրում է հռետորներին միւնոյն բանը չը կրկնել երկրորդ անգամ, խուսափել փոքրաբարձրաբայանդիմանութիւններ և կշտամբանքներ ուղղելուց։ Աջակողմից մի ձայն խնդրում է նախագահին չը ժառանգ պաշտպանել աջակողմեաններին վիրաւորանքներ հասցնելուց։ Նախագահը խնդրում է նրան նկատողութիւններ չանել։

Գ.Արուճ Սեկրետը պատերազմա-դաշտային դատարանների իրաւաբանական յօրինուածքը անկատարեալ է գտնում սակայն չէ կարելի խօսել ջնջոցքի պակասութեան մասին հրդեհի ժամանակ։ Անիշխանութեան դէմ, որ սպառնում է ժողովրդական ինքնակամ դատաստանով, կուելու միջոցների բացակայութիւնը ստիպեց կառավարութեան դիմել պատերազմա-դաշտային դատարաններին։ Օրէնսդրութիւնը պէտք է առաջնորդվի մանրլուսանկարութեամբ։ Հարկ կը լինի հաշվել առողջ մտքի սառը հրամանների հետ։

Ալէխինսկին գտնում է, որ ժողովրդական մարտիկը, որ գործադրում է սեփական վճիռը, անհամեմատ բարձր է և վեհ գեներալ-նահանգապետներից և գլխաւոր հրամանատարներից, որոնք սպիտակ ձեռնոցներ հագած՝ պարադրում են մահվան դատավճիռներ և որոնք ստիպում են որ այդ դատավճիռները իրագործեն ուրիշները։ Նախագահը հաւատում է, որ հոտորը չէ հաւանում տերրորիստական ակտերը. այդպիսի վերաբերմունք Դումայի նախագահը թոյլ չի տալ։

Ալէքսինսկին շարունակում է և զարմանում է որ սրբազան Եւլոգիէն չէ հասկանում քրիստոնէութեան իսկական միտքը. (աջակողմը բարձրաձայն քրքջում է)։

Նախագահը կրկին խնդրում է խուսափել կշտամբանքներից։

Ապա Ալէքսինսկին մատնանշում է, որ աջակողմեանները հետամուտ են Արևմուտքի առաջադիմութեան, մինչդեռ ամենեղից դարշելի բաներն են վերցնում միայն։

Նրանք չեն կամենում փոխ առնել անձի անձեռնմխելիութեան անփոփոխ օրէնքը, սակայն յօժարութեամբ վերցնում են Թիւրքիայից նրա բարեկի ցիցը։ Դումայի ամբիոնից ջարդերի քարոզ կարդալու իբրև հետևանք հանդիսանում է իմ ստացած անօրինի նամակը։

Նախագահը արդելում է կարդալ այդ անօրինի նամակը։

Ալէքսինսկին իր ճառը վերջացնում է, նկատելով որ պատերազմա-դաշտային դատարանները ծառայում են միայն արտօնեալ դասակարգի ձեռքով ժողովրդին շահագործելու միջոց։ (Թոյլ ծափահարութիւններ ձախակողմում)։

Սիճաչիճով ասում է, որ պատերազմա-դաշտային դատարանների մասին երկու կարծիք լինել չի կարող։ Դրանք դատարաններ չեն, այլ պատիժ միայն։ Պէտք է դատապարտել ամեն տեսակ սպանութիւն, որտեղից էլ որ նրանք բղխելիս լինեն։ Եթէ այդ դատապարտութիւնը չը լինի, ուրեմն անկասկած է, որ [illegible] խոսելիս արմատներով։ (աջակողմը ծափահարում է)։

Շինգարեվը մատնանշում է, որ Դումայի գործը ընդունելիներ ընդունելը չէ. նա ստեղծելու է միայն օրենսգիրք։ Օրենական պետութեան մէջ անենթակայ դատարան չը պէտք է գոյութիւն ունենայ։ Եթէ կառավարութիւնը յիրաւի իսկական իշխանութիւն է, ուրեմն նա կարող կը լինի հրաժարվել իր սխալանքներից, չը սպասելով օրէնքով նրան տրված միամսեայ ժամանակամիջոցին։

Տրեյմանը նկարագրում է այն ժայռ պատկերը, որով գործադրվում են պատերազմա-դաշտային դատարանների վճիռները Շուրջբալտեան երկրում։

Մուսաֆա Մամմադով պնդում է, որ պէտք է պատերազմա-դաշտային դատարանները վերանան, որպէս զի կարելի լինի ազատել Դումային մեղադրանքներից։

Մազեօվիչը այժմէական խնդիրը համարում է նախ և առաջ երկրի խաղաղացումը, ապա դաշտային դատարանների վերացումը. զարմանում է, որ լեհական կօլօն պնդում է՝ թէ այդ դատարանները պէտք է վերացնել Վարշաւայում և Պրիվիսլանսկի նահանգներում կատարվող տերրորներից յետոյ։ (Կօլօյի անդամները ապտակում են. «Լեհական թագաւորութեան մէջ»)։ Հռետորը անհիմն է դտնում նաև սահմանադիր-ռամկավարների դաշտային դատարանները վերացնելու հասարկված օրինագիծը, ինչպէս և սահմ. ռամկավարների այն առաջարկը՝ թէ պէտք է պատգամաւորներ ուղարկել քաղցով պատած տեղերը՝ քաղցածներին օգնութիւն հասցնելու համար, և իր ճառը վերջացնում է հետևեալ փրազոյով. «Ռուսաստանը լալիս է, իսկ ժէլեարները ծիծաղում են»։ (աջակողմը ծափահարում է։ Մինիստրական օթեակից գնում են մինիստրների խորհրդի նախագահը, ժողովրդական լուսաւորութեան, արդարադատութեան մինիստրները և ուրիշները)։

Քահանայ Վլադիմիրսկին պատերազմա-դաշտային դատարանների մէջ տես՝ում է հորութեան արձագանքը։ Նա պնդում է նրանց անյապաղ վերացման վրա։

Ժամը 2 և 10 րոպէին նախագահը յայտարարում է ընդմիջում և խնդրում է պատգամաւորներին լրացնել մասակարգական մասնաժողովի համար մատնանշվող անդամների ցուցակը։

Նիստը վերսկսվում է 3 ժամ 16 րոպէին։ Նախագահը նախազգուշացնում է, որ ժամը 4-ին պրիսաւի օգնականները կը սկսեն ժողովել մասակարգական մասնաժողովի համար տրվող ընտրողական թերթիկները, որոնց կը հաշվեն մարտի 14-ին։

Դուման անցնում է պատերազմա-դաշտային դատարանները վերացնելու վիճաբանութիւններին։

Արխանգելսկին սօցիալ-յեղափոխականների կողմից բողոքում է ամեն տեսակ սպանութիւնների դէմ, որովհետև չի կարելի մարդասպան անուանել ժողովրդական մարտիկին, որ կատարում է ժողովրդական խղճի հրամանը։ Ասում են—կանգնեցրէք տերրորը, իսկ յետոյ զնացէք դէպի գահի պատուանդանները՝ խնդրելու վերացնել մահվան պատիժը և պատերազմա-դաշտային դատարանները։

Ժողովրդական ընտրեալները կարիք չունեն խնդրել, նրանց պարքն է օրէնսդրութեամբ զբաղվել (մի քանի բաժինների մէջ սկսվում է շարժում)։ Սօցիալ-յեղափոխականները ցանկանում են խաղաղ աշխատանք, բայց ժողովուրդը պահանջում է նոր կռիվ դրաւել։

Ապա մերժվում է վիճաբանութիւնները դադարեցնելու առաջարկը։

Տեր-Աւետիսեանը պատերազմա-դաշտային դատարանների մասին խօսելով, վերջացնում է, նկատելով՝ որ Դումայի դահլիճի առաստաղը չը դիմացաւ ժողովրդի հառաչանքներին և փլվեց. (քրքիջ, շփոթ, նախագահը զգաստարում է)։ Եթէ չը վերացվեն պատերազմա-դաշտային դատարանները և մեռցած բացառիկ որոշումները, այն ժամանակ կը փլվեն աշխարհիս ամենաուժեղ առաստաղները։

Կուզմին-Կարավայեվի ճառից յետոյ ընդունվում է խօսելու ժամանակը 5 րոպէով սահմանափակելու առաջարկը։

Կոմս Սոլնցօվ-Թէլմօրը կասկածում է, որ Դուման ինքնին համայն Ռուսաստանն է ներկայացնում և որ նրա որոշումները իր մէջ պարփակում են հանուր ժողովրդի ցանկութիւնները։ Երկիրը գիտէ, որ դաշտային դատարանների նշանակած են միայն դատապարտեալների և աւազակների համար։ Եթէ այդ դատարանները չը մոցնվէին, այն ժամանակ Դուման չէր կարող դումարվել։ Անմեղների արիւնը թափվում է միայն կատորած սարքերի դատավճիռների հետևանքներ։ Հռետորը բողոքում է, որ այժմ քննվում է պատերազմա-դաշտային դատարանները վերացնելու օրինագիծը, մինչդեռ չէ քննված ազրարային հարցը։

Դադարեցնում է վիճաբանութիւնները դադարեցնելու առաջարկը։ Խօսքը տրվում է մինիստրների խորհրդի նախագահին։ Դանլիճում տիրում է խորին լռութիւն։

Սօլիպինը ասում է. «Քննվելի հարցի նկատմամբ ես նախ և առաջ պէտք է Դումայի ուշադրութիւնը հրաւիրեմ այն հանգամանքի վրա, որ կառավարութեան կարծիքով նա ատանում է սխալ ուղղութիւն։ Ժամանակաւոր օրէնքները, որոնք իրանց այժի մէջ մտան առաջին Դումայի արձակումից յետոյ, կարող են վերացվել հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի համաձայն միայն։ 87-րդ յօդուածը ասում է, որ այդ մէջցքի գործողութիւնը դադարում է, եթէ պառլամենտը կամ առանձին բաժնի գլխաւոր հրամանատարը Դումայի պարպմունքները վերսկսվելուց յետոյ առաջին երկու տիպերի ընթացքում Գլխաւոր Դուման է մոցնում ձեռք առած միջոցներին համապատասխան օրինագիծ։ հետևաբար, հէնց ինքը օրէնքն է սահմանում այդ օրինակ ժամանակաւոր օրէնքի դադարեցման կարգը։ Թւում է, թէ ուրիշ կարգ չէ կարող լինել։ Բայց եթէ նոյնիսկ ընդունենք ուրիշ հայեցակէտ, այսինքն, որ և՛ ժամանակաւոր օրէնքները կը վերջանան այդ իսկ կարգով, ինչպէս մշտական օրէնքները, այսինքն, Գլխաւոր Դումայի հաստատման կանոնների 56-րդ յօդուածի համաձայն, ուրեմն և հէնց այդ դէպքում այդ հարցի դատաքննութեան քննութիւնը կատարելի է լինել մէկ ամսից ոչ շուտ, երբ Դումայի նախագահը այդ մասին Դումայի անդամներից 30-ի առորոշութեամբ կը ներկայացնէ գրաւոր յայտարարութիւն։ Այսպէս, օրէնքի համաձայն այդ հարցը կարելի է քննել ապրիլի 12-ից ոչ շուտ, որովհետև մարտի 12-ին տրված է այդօրինակ յայտարարութիւն։ Եթէ նակաղի նախագիծը կը հաղթէ այդ օրէնքին, ուրեմն կը նշանակէ, որ նախագիծը սխալ է և հէնց, այդ իսկ պատճառով, նրան Սենատը չը հրատարակից անցեալ տարի։ Ես խօսում եմ միայն նրա համար, որպէսզի հաստատեմ, որ 87 կամ 56-րդ յօդուածների համաձայն պատերազմա-դաշտային դատարաններին վերաբերվող օրէնքը օրինական ճանապարհով կարող է հանվեցյն դէպս իր այժը կորցնել ապրիլից ոչ կանուխ, բայց դա, պարզապէս, գործի ձևական կողմն է։ Այստեղ վիճաբանութիւնները ընթացան ըստ էութեան։ Մենք ստեղ մեզադրանքներ լսեցինք կառավարութեան հասցէին, մենք լսեցինք, որ նրա ձեռքերը արիւնաշաղախ են, մենք լսեցինք, որ Ռուսաստանի համար ամօթ և նախատինք է, որ մեր պետութեան մէջ իրագործվեցին այնպիսի միջոցներ, ինչպիսիներն են պատերազմա-դաշտային դատարանները։ Ես հասկանում եմ, պարոնայք, որ այդ վիճաբանութիւնները թէև չեն կարող ըլալ հետևանք ունենալ, բայց և այնպէս ամբողջ Դուման կառավարութիւնից ապասում է ուղղակի և որոշ մի պատասխան, թէ ինչպէս է կառավարութիւնը վերաբերվում պատերազմա-դաշտային դատարանների օրէնքը շարունակելու խնդրին։ Ես չեմ պատասխանի, միայն այն յարձակումներին՝ թէ իշխանութիւնը զանցառութիւններ է գործել, թէ այդ օրէնքը մոցնելու ժամանակ կառավարութիւնը սխալներ է ունեցել, և այլն։ Այդ կշտամբանքները անհիմն են, սին և նրանց պատասխանել դեռ վաղ է։ Ես պիտի խօսեմ մէկ ուրիշ, աւելի կարևոր հարցի մասին. պէտք է խօսեմ այդ օրէնքի հէնց ընութեան վրա արած յարձակումների մասին։ Ամենապայծառ արտացոլում այդ մեղադրանքները ստացան Գլխաւոր Դումայի անդամ Մակլակովի ճառի մէջ։ Եթէ ես նրան սկսէի առարկել, այդ դէպքում անկասկած ես նրա հետ իրաւաբանական վէճի էլ բռնվելու։ Ես պէտք է ասպարէզ դայի պաշտպանելու պատերազմա-դաշտային դատարանները, իբրև դատաստանական, իբրև իրաւաբանական ինստիտուտ։ Մատծողութեան այդ հողի վրա, թերևս, կարծում եմ, որ ես ոչ Մակլակովի, ոչ նոյն սկզբունքը պաշտպանող մեացած հեռաօրների հետ հանձնաժողովի հետ չը կայի։ Դժուար է առարկել սահուն իրաւաբանին, որ տաղանդաւոր կերպով պաշտպանում է իր վարդապետութիւնը, սակայն, պարոնայք, պիտութիւնը պէտք է խորհել այլ կերպ։ Նա պէտք է կանգ առնէ ուրիշ հայեցակէտի վրա և այդ տեսակէտից իմ համոզմունքը անխախտելի է և կայուն։ Պետութիւնը կարող է պետութիւնը պարտաւոր է, երբ նա գտնվում է վտանգի մէջ, ձեռք առնել ամենախիստ, ամենաբացառիկ օրէնքներ, որպէսզի պաշտպանել իրան քայքայումից։ Դա կար, դա կայ, դա կը լինի միշտ և անփոփոխ։ Այդ սկզբունքը մարդու ընութեան մէջ է, նա հէնց պետութեան ընութեան մէջն է կայանում։ Երբ պետութիւնը պարտնայք, դուք այժմ ներբէք մտնում ուրիշների ընակարանները, կոտրատում էք դռները, կոտրատում էք պատուհանները։ Երբ մարդ հիանդ է, նրա օրգանիզմը ջերմկում են թունաւորելով նրան թոյնով։ Երբ ձեզ վրա յարձակվում է մարդասպանը, դուք նրան սպանում էք։ Այդ կարգը ընդունում են բոլոր պետութիւնները։ Չը կայ մի այնպիսի օրէնսդրութիւն, որպիսին կառավարութեան իրաւունք չը տար դադարեցնել օրէնքի ընթացքը, երբ պետական օրգանիզմը խախտված է մինչև արմատները, որպիսին նրան լիակատարութիւն չը տար՝ դադարեցնել իրաւունքի բոլոր նորմաները։ Դա, պարոնայք, ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեան դրութիւնն է։ Նա կառավարութեան հասցրեց ոչ միայն ուժեղացրած բեռներիների, ոչ միայն տարբեր բիւրոներ գործադրելուն տարբեր անձանց և մարդկանց տարբեր կաթեգորիաների վերաբերութեամբ, նա պետութեանը ստիպեց ենթարկել բոլորին մէկ կամքի, մէկ մարդի կամայականութեան։ Նա հարկադրեց կառավարութեանը՝ դիմել դիկտատուրայի, որը երբեմն պետութիւնը հանել է վտանգից և հասցրել է փրկութեան։ Լինում են, արդարև, օրհասական վայրկեաններ պետութեան կեանքում, երբ պետականութեան անհրաժեշտութիւնը բարձր է կանոնած իրաւունքից, երբ հարկ է լինում ջոկողութիւն դնել թէօրիայի հայրենիքի թէօրիայի և ամբողջութեան մէջ։ Սակայն, պարոնայք, այս ամբիոնից ակնարկներ եղան իմ քաղաքական պաւաի, իմ շիտակութեան մասին։ Ես պէտք է բացէբաց պատասխանեմ, որ այդ օրինակ ժամանակաւոր միջոցները ընաւ մշտական ընաւորութիւն ստանալ չեն կարող։ Երբ նրանք տեղական են դառնում, նրանք նախ և առաջ կորցնում են իրանց այժը. ապա նրանք կարող են ազդել հէնց ժողովրդի վրա, որի իրաւունքները պէտք է կրթվեն օրէնքով։ Ժամանակաւոր միջոցը — խիստ և դաժան միջոց է անշուշտ։ Նա պէտք է տապալէ յանցաւորը յորձանքը, նա պէտք է բարձէ մէջտեղից ժամրոտ երեսիթը—և ապա վիրանայ յաջիանականութեան զերկը։ Ուստի կառավարութիւնը պէտք է այժմ պարզ և ընորդ կերպով հաշիւ տայ իրան երկրի դրութեան նկատմամբ, պարզ պատասխանէ հարցին, թէ ինչ է նա պարտական անելու. և ահա ծագում են երկու հարցեր—կարող է, արդեօք, կառավարութիւնը, և այժ ունի արդեօք նա—պաշտպանել ռուս քաղաքացու սեփականութիւնը և կանոնը սովորական օրէնքների գործադրութեամբ, սովորական միջոցներով։ Բայց կարող է լինել և մի ուրիշ հարց—պէտք է ինքն իրան հարց տալ—չէ՞ հանդիսանում, արդ՝ օրդ, այդպիսի բացառիկ օրէնքը մի պատնէշ՝ ժողովրդական կեանքի բնական ընթացքի առաջ, նրա ընթացքը բնական հանդիսանքի մէջ մոցնելու դէմ։ Առաջին հարցին, պարոնայք, պատասխանել դժուար չէ բնաւ. նա պարզ է այստեղ եղած վիճաբանութիւններից։ Դեթաքսաբար, արիւնալի ցնորքը, պարոնայք, դեռ չէ պակասել, և հարիւրներ սողորգաղ [illegible] դեռ վերջ տալ։ Երկրորդ հարցը աւելի բարդ է։ Ի՞նչ կը լինի, եթէ հակառակորդները հոանքին տրվի բնական ընթացքը, եթէ նրա դէմ ընդդիմադիր այժ չը կանգնցնվի։ Մենք այստեղ լսեցինք սօցիալ-յեղափոխականների յայտարարութիւնը։ Ես կարծում եմ, որ նրանց վարդապետութիւնը համակերպ չէ սօցիալիստական և յեղափոխական կուսակցութիւնների վարդապետութիւնների հետ, որ այստեղ դեռ է խաղում կոչումների ներդաշնակութիւն, որ այստեղ ներկայ եղողները չէն բաժանում այդ կուսակցութիւնների ծրագիրները։ Տրված հարցին պէտք է պատասխանը տալ արձագանգներից։ Վերցնում եմ պաշտօնական փաստաթուղթ—Ռուսական սօցիալական բանւորական կուսակցութեան ընտրողական ծրագիրը։ Ես կարդում եմ նրա մէջ, «Միայն լայն ժողովրդական մասսաների ուժեղ գրոհով, միայն ժողովրդական ապստամբութեան ըմբոստ յորձանքով կը շարժվի գործը, որի վրա յենվում է կառավարութիւնը, կը տապալվեն ինքնակալ դեսպոտիզմի սիւները, միայն կուսով ժողովուրդը ձեռք կը ձգէ պետական իշխանութիւնը, ձեռք կը բերէ հող և ազատութիւն։ Ամբողջ ժողովրդի ներկայացուցիչներին ուղղված վերջնական թեղիսում ասված է. «Որպէսզի այդ նպատակով դումարվի հինգերը ժողով ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի—առանց սեռի, կրօնի և ազգութեան խարութեան ձայնաւորութեամբ, որպէսզի բոլոր իշխանութիւնները և պաշտօնական անձինք ընտրվեն ժողովրդից և փոփոխվեն նրանով։ Երկրում չէ կարող լինել ուրիշ իշխանութիւն, բացի ժողովրդի սահմանածից, որը պատասխանատու է նրա և, ներկայացուցիչների առաջ, որպէսզի Ռուսաստանը, դեմօկրատական հանրապետութիւն դառնայ»։ Իմ առաջն է մի ուրիշ փաստաթուղթ—Գլխաւոր Դումայի բացումից առաջ Տամբրֆօրսում կայացած համագումարի որոշումը։ Այդ որոշման մէջ ես կարդում եմ. «Համագումարը դրականապէս հակառակ է այն տակտիկային, որ որոշում է Դումայի նպատակը—իբրև օրգանական աշխատանքի կառավարութեան հետ աշխատակցելով, Դումայի իրաւասութիւնը շրջանափակելու ժամանակ այն բազմաթիւ հիմնական օրէնքների համար, որոնք սանկցիա չեն տանում ժողովրդական կամքով։ Ապա բանաձևը վերջանում է. «Համագումարը անհրաժեշտ է գլխաւորում—ժամանակաւոր միջոցների ձևով—բոլոր կենտրոնական և տեղական տերրորիստական ակտերը, որոնք ուղղված են իշխանութեան գործակալների դէմ, որոնք ազմինիստրատիւ - քաղաքական նշանակութիւն ունեն, դնել կենտրոնական կոմիտէի ղեկավարութեան և անմիջական հսկողութեան տակ։ Ընդ սմին համագումարը գտնում է, որ կուսակցութիւնը պէտք է բան կարելուն ընդարձակ կերպով նոր միջոցներ գտնէ իր ազդեցութիւնը երկրում մեծացնելու նպատակով և ագիտացիայի ատիթներ և անդուլ կերպով երկրում տարածել՝ ժողովրդական լայն շարժման հիմնական պահանջները պաշտպանելու համար, շարժում, որ վերջում պէտք է ընդհանուր ապատամբութեան փոխվի։ Պարոնայք, ես չեմ յոյսենդրիլ ձեր ուշադրութիւնը ուրիշ, ոչ պակաս պաշտօնական գոյն ունեցող արձանագրութիւնների ընթերցումով։ Ես միայն ինձ հարց եմ տալիս,—իրաւունք ունի՞ արդեօք կառավարութիւնը իրերի այդօրինակ դրութեան ժամանակ ցոյցի քայլ անել որ բնաւ բեալ արժէք չունի,—քայլ՝ դէպի օրէնքի ձևական խախտումը. իրաւունք ունի՞ արդեօք կառավարութիւնը ամեն բոպէ մահվան վրանդի ենթարկվող իր հաւատարիմ ծառաներին երես առ երես—հրապարակական դիշում անել յեղափոխութեան։ Խոր կերպով քննելով այդ հարցը, կենտրոնանալով և բարդմակողմանի կերպով նրան կշռադատելով, կառավարութիւնը վերջի վերջոյ եկաւ այն եզրակացութեան, որ երկիրը նրանից սպասում է երբէք թուլութիւն ցոյց չը տալ, այլ ցոյց տալ միայն հաւատ։ Մենք կամենում ենք հաւատալ, մենք պէտք է հաւատանք, որ ձեզանից, պարոնայք, մենք կը լսենք խաղաղացման խօսքը, որ դուք կը դադարեցնէք արիւնալի խեղաթիւրումը։ Մենք հաւատում ենք, որ դուք կասէք այն խօսքը, որպիսին մեզ բոլորիս կը ստիպէ կանգնել ոչ Ռուսաստանի պատմական շինութեան կործանման, այլ նրան վերաշինելու, վերակազմելու և զեղեցկացնելու համար։

Այդ խօսքը ստանալու կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնէ նրա համար, որպէսզի խիստ օրէնքը սահմանափակ միայն ամենաբացառիկ դէպքերով ամենայանդուգն յանցանքների վերաբերութեամբ այն պայմանով, որ Դուման Ռուսաստանը կը մղէ դէպի հանդիստ աշխատանքը։ Այդ օրէնքը ինքներան վերացաւ նրանով, որ նա չառաջարկվեց օրէնսդրական ժողովի հաստատութեան։ Պարոններ, ձեր ձեռքումն է Ռուսաստանի խաղաղացումը, որը անշուշտ կարող է տարբերել դահիճների ձեռքի վրա եղած արիւնը այն բարեխիղճ բժիշկների ձեռքերի արիւնից, որոնք շատ կարելի է, ամենաարտակարգ միջոցներ են գործ դնում միայն այն յոյսով, այն միակ յոյսով, թէ բժշկում են ծանր հիանդի։ (մինիստրների խորհրդի նախագահը ինքնում է ամբիոնից աջակողմեանների ծափահարութիւնների տարափի տակ)։

Վիճաբանութիւնները վերջանում են։ Մինչև Սոլիպինի ճառը, Կուզմին-Կարավայէվը առարկում է կոմս Բօբրինսկուն, որը անցեալ նիստում նրան ազատ էր անուանել։ Կուզմին-Կարավայէվը առարկելով Բօբրինսկուն ըստ էութեան, ի միջի այլոց յայտարարում է, որ կարականապէս դատապարտում է ձախակողմեանների կողմից բղխող սպանութիւնները։ Դաշտային դատարանները հռետորի կարծիքով հետևանքներ չը ունեցին. որքան շուտ նրանք վերանան, այնքան շուտ կը մտնենայ սիրտ մորմոքող սարսափների վախճանը։

Սոլիպինից յետոյ խօսում է զեկուցանող Հէսսէը և շեշտում է, որ ամբողջ Դուման համերաշխ է պատերազմա-դաշտային դատարանների արդարադատութեան իրաւաբանական զնահատութեան վերաբերութեամբ, սակայն աջակողմեանները նրա վերացումը համարում են վաղաժամ։ Հռետորը կարծում է, որ գիշերը կառավարութեան կողմից ապացոյց կը լինէր նրա այժի և հնօրհութեան։ Դուսաս պատասխ կը լիներ անել ամենը՝ երկիրը խաղաղացնելու համար, բայց նրան խանդարում են աջակողմեանները։ (Աղմուկ և ազազակ աջակողմեանների նստարանները)։

Վիճաբանութիւնները վերջանում են։ Դուման ընդունում է օրինագիծը՝ 16 դէմ մասնաժողովին յանձնելու առաջարկութիւնը։ Նախագահը յայտարարում է 42 անդամների առաջարկը՝ յայտնել խորին պարտաւանք և զայրոյթ յեղափոխական սպանութիւնների և ընտրութիւնների ատիթով։

Կիզիլեասքը խնդրում է մինիստրների խորհրդի նախագահին բացատրել, թէ արդեօք Դուման իրաւունք ունի՞ ընդհանուր քանաձևներ ընդունել, թէ՞ ոչ։ Նախագահը յայտնում է, որ Դումայի իրաւասութեանը վերաբերեալ հարցերի լուծումը պատկանում է Դումայի նախագահին և իրան Դումային։

Բոբրինսկին ներողութիւն է խնդրում Կուզմին-Կարավաեվից։

Նիստը փակվեց 5 և 56 րոպէին։

ՄԱՄՈՒԼ

Երկրի բարենորոգութեան գործում մինչև այժմ անդրամ կառավարական մխանիզմը Գլխաւոր Դումայի գումարվելուց յետոյ սկսել է անհանգիստ ճօճվել, կենդանութեան նշանները ցոյց տալ։ օրինագծեր օրինագծերի ետևից են խմբագրվում Դումային ներկայացնելու համար։ Կովկասի հրատապ, անկասելի կարիքներից մէկն էլ զեմստվային ինքնավարութեան խնդիրն է, որից մինչև այժմ զուրկ է մնացել նա, չը նայելով հարցը յարուցված է վաղուց, կրկնված է քանիցս անգամ, բայց չէ իրագործված. այժմ Կովկասի Փոխարքայի գլխաւորութեամբ Գլխաւոր Դումային ներկայացնելու համար պատրաստում է մի օրինագիծ՝ Անդրկովկասում զեմստվային հաստատութիւններ մոցնելու մասին։ Այդ խնդրի առիթով կովկասցիներին յայտնի Օ. Սեմենը Մոսկվայում հրատարակվող «Самоуправление» շաբաթաթերթի մէջ հետևեալ խորհրդածութիւններն է անում, որի հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին.

Նախնական դիտաւորութիւնների համաձայն, որոնք ծնունդ էին առել այն ժամանակ, երբ կովկասեան բիւրօկրատիան գեռևս շարունակում էր Պետերբուրգի թեղրութեամբ բեկում անել իր «վատահութիւնը» հասարակական ոյժերին, Կովկասում զեմստվային հաստատութիւններ մոցնելու նախագիծ պէտք է վերջնական լուծումն ստանար Փոխարքայի խորհրդի մէջ ամբողջ Կովկասի ազգաբնակութեան կողմից ընտրված պատգամաւորների մասնակցութեամբ։ Բայց յետոյ, երբ բեկիցիան յաթանակեց, տեղի ունեցաւ յայտնի salto mortale-ն և ազգաբնակութիւնը, որի մտամտինչև այդ բիւրօկրատիան աշխատում էր դուր գալ, իր իշխանութեան «վստահութիւնը չարդարացրեց» և նրա ընտրած պատգամաւորները արդէն մէկ ու կէս տարի է, որ գտնվում են լուռ հանդիսատեսի երկրորդի դերում մեր ծայրագաւառի համար զեմստվային բարենորոգումներ «մշակող» ատեանի առջև։

Այդ պատգամաւորների գումարումը «վստանդաւոր է» հասարակական հանգստութեան համար—ահա այն պաշտօնական պատճառաբանութիւնը, որով զեկավարվելով տեղական կառավարչական շրջանները, վճռեցին այդ խոշոր հասարակական բարենորոգումը յանձնել բիւրօկրատային թերեալ։

Այնուհետև պատմական փաստերի հիման վրա զեմստվային հարցի ծագումն ու յաջողական զարգացումը յիշատակելով, հասատատում է, որ ոչ թէ հասարակական խաղաղութիւնը խախտելու վտանգ էր նրա իրագործումը կամ ձգձգելու, հարցը «մահուդի տակ պահելու» շարժառիթը, այլ ազգաբնակութեան ընտրեալների պահանջների «չափազանցութեանը» երկիւղ։ Իսկ որ այդ պահանջները զեմստվային բարենորոգութեան վերաբերեալ չափազանց պէտք է թուային, այդ պարզվում է այն վերաբերմունքից, որ մի կողմից ցոյց է տուել տեղական բիւրօկրատիան, իսկ միւս կողմից՝ տեղական ազգաբնակութիւնը։ Ինչպէս յայտնի է, զեմստվային հաստատութիւնների միտքը յղացել է Թիֆլիսի ազնուականութեան մէջ առաջին անգամ դեռ 1871 թուին, երբ Ալեքսանդր II-րդ կայսրը Կովկաս էր եկել։ Բայց նա աջողութիւն չունեցաւ, թէև մի քանի անգամ նորից է յարուցվել։ Զը նայելով դրան՝ տեղական հասարակութիւնը և ժամանակը, ուրեմն ազգաբնակութիւնը, օգուտ քաղելով ազնուականների այդ առաջին որոշումներից, սկսեցին եռանդուն ագիտացիա մղել Կովկասում զեմստվային հաստատութիւններ մոցնելու համար։ Դրա արդիւնքը եղաւ այն, որ 1903 թուին կազմվեցին «Տեղական կոմիտեներ գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքների մասին», որոնք արտայայտեցին իրանց կարծիքը երկրի զեմստվային մտտութեան մասին։

Զը նայելով նախագահների (նահանգապետի) կողմից գործ դրված ճնշումներին,—ասում է Սեմենը,—կոմիտեների մեծամասնութիւնը գաղափարեց չէնօռիկական տիրապետութիւնը զեմստվային գործում, իբրև բոլորովին անպէտք բան, որ մղում է դէպի տնտեսական քայքայումը և երկրամ գործութեան անկումը։

Ապա թուելով կոմիտեների առաջարկած զեմստվային երեք տեսակները, աւելացնում է.

Այդպիսով կոմիտեների մեծամասնութիւնը ոչ միայն անհրաժեշտ համարեց հասարակական ոյժերի կազմակերպումը գիւղատնտեսական քայքայման առաջն առնելու համար իբրև երաշխաւորութիւն, այլև մատնանշեց այն կոնկրետ ձևերը, որոնց մէջ պէտք է ամփոփվի այդ կազմակերպութիւնը։

Այնուհետև յաջորդող քաղաքական հանգամանքները այնպէս դասաւորվեցին, որ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը Կովկասում զարուց առաջ «պարաք համարեց մատնանշել Կովկասում զեմստվային հաստատութիւններ մոցնելու հնարաւորութիւնն ու նպատակայարմարութիւնը։ Կովկաս զարուց յետոյ, 1905 թուի յունիսի 16-ին, նախագահական խորհրդակցութեան ժամանակ՝ Անդրկովկասում զեմստվո մոցնելու ատիթով յայտնեց. «Ես համոզված եմ որ Կովկասի «մի որոշ մասը» լիովին հասունացել է զեմստվային ինքնավարութեան համար այն ձևով, ինչ ձևով որ կը հասունանայ ինքը։ Ոչ աւելի։ Դրանից հետևում է այն, որ մեզ համար անհրաժեշտ է և օգտակար պաշտպանել նրա պատգարական շարժումը մինչև վերջ։ Մեր աւտօնոմիան կարող է հիմնաւոր լինել միայն ռուսաց սահմանադրութեան շրջանակների մէջ։ Այլապէս, եթէ մենք ողորմած շնորհով սատանալ էլ լինենք որ և է պատօնական դրութիւն պետութեան մէջ, մենք մի տեսակ կը կազմենք նրա մէջ թղթախաղի տան նման մի բան, որը իրական տեսակէտից արդիրված է, բայց կառավարութիւնը թոյլատրում է։

Այդպիսով,—ասում է «Pramda»-ն,—մենք պարզ տեսնում թէ ինչ պէտք է ցանկանք։ Եթէ բանականանք երկրի բիւրօկրատիայի պլօնիզացիայով—միայն բնական կը դարձնենք մեր ճահիճը։ Աւտօնոմիան չէ կարող լինել լոկ նուէր մի քուրը քաղաքակիների համար, նա պէտք է լինի ամբողջ ժողովրդի սօցիալական յարաբերութիւնների կատարելագործված մի ձև։ Մենք պէտք է նուաճենք պետութիւնից անխախտ հիմունքներ և յետոյ նրանց վրա կառուցանենք իսկական ռամկավար կառավարութիւն, որի մէջ ժողովուրդը կը լինէր ոչ թէ «վարչական հանդիսատես» դերում, այլ նրա գլխաւոր և ակտիւ մասը։ Այդ նշանակութիւնը ունի աւտօնոմիան, իբրև լուսնագրված պրոգրեսիվ զեմստվատիայի դրօշակի վրա։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼՕԶՈՒՆԳՆԵՐԸ

I

Հին բժժիմի ճնշման տակ ճապաղել է մեր կեանքը և ծանր կապանքների մէջ կաշկանդված հասարակական ստեղծագործող ոյժերը կորցնելով իրանց թռիչքները, իրանց արտադրելու ընդունակութիւնները մտորում են իրար դէմ զարվող, իրար դէմ ըմբոստացած խրոխտ ծփանքների մէջ մարդկային կեանքը բարելաւող միջոցներ գտնելու համար։

Սակայն տարերային այդ խառնափնթոր, այդ քաոսական բաղխումի մէջ անհարիր է գտնել ճշմարտութիւնը և հեռու մնալ կրքի բռնկումներից, զարնելու և զարնվելու հմայքից, որ մեր դժբախտ իրականութեան հիւանդոտ կողմն է։

Մեր ազգապատի մտաւոր և հոգեկան ատաստեանի մէջից դուրս են բարձրացնում այլանդակ բարքերի ու հակացողութիւնների տէր գործիչներ, որոնք չունենալով ոչ գործելու ընդունակութիւն և ոչ էլ որևէ առաքինութիւններ, այնուամենայնիւ որպէսի հատատութեամբ ըմբռնել են ամբոխի հոգեբանութիւնը, նրա վատ հակումները, վարժվել են հայհոյել, կեղծել և էֆֆեկտի համար այդ գործելակերպը վարագուրել մեծանուն լոզունգների տակ։ Եւ միամիտ մարդիկ յափշտակված՝ հետևում են այդ լոզունգին։ Նրանց կարծես չէ հետաքրքրում այն, թէ այդ առաջադրած լոզունգը ունի՞ որևէ գաղափարական իմաստ, թէ՞ պայմաններ, թէ՞ նա մի գիտակ է, որով քողարկված փառաբէրները իրանց անձնական հաշիւներն են տեսնում։

II

Մեր առօրեայ

ժանակի պահանջով հետաքրքրվող մարդիկ, որոնք աղօտացող կանքին պայծառութիւն տային։ Անհառ սեփական գործերով զբաղած էր. ընդհանուրին պատկանելիք, ընդհանուր ուժերով առաջ տանելիք գործերը բարձիթողի են ձգված նրա կողմից։

Եթէ գաւառում ապրող երիտասարդ ուժերի մէջ չը կայ համերաշխութիւն և զուգորդված գործունէութեան ցանկութիւն, ոչինչ նրանցից սպասել չի կարելի, նրանց զասական, մի մի ձեռքով ծափը լսելի չէ կարող մինել երբէք։

Դպրոցականի մասին ես իսկապէս ամաչում եմ խօսել, որովհետև երկար վիճաբանութիւնների տեղիք տուեց։ Մեր դպրոցի աւագ ուսուցչի պ. Տէր-Մինասեանի գործը, ըստ նրա ցանկութեան, քննեց երիտասարդների մի խումբ, սակայն պ. ուսուցիչը նրանց կազմած բեղուլեցիային էլ չենթարկեց։ «Մշակի» անցեալ №-ներից մէկում, ոմն Լորիկ գրում է, որ Դաշնակցութիւնն է քննել իմ և պ. Տէր-Մինասեանի մէջ տեղի ունեցած անբաւականութիւնները։ Նախագահ ընտրված պարոնը ընդարձակ ժողովականների ցանկութեամբ, նա իրան ընտրված համարեց ոչ երբև զաշնակցական և այնպէս գործը վարեց, մինչև քննութեան վերջը։ Երևում է, որ յօդուածագիր պարոնը ներկայ չէ եղել ժողովին։ Ես իրրև ոչ դաշնակցական, կարող էի դաշնակցականի այս կամ այն ընտրազօսիկ կարծիքի դէմ գրել, եթէ ճշմարտութիւնը մոռացութեան տրվէր։ Իսկ երբ քննութեան վճռին պ. Տէր Մինասեանը, որ աւելի յայտ ունէր արդար ճանաչվելու, քան թէ աւելի խորը թաղվելու, չը համաձայնվեց, ես խոհեմութիւն համարեցի լռութեան տալ մեր վէճը։

Վեհափառի դիւանատից էլ ստացված է մի կոնդակ, որի վերջում հրահանգված է. 1) «տալ շարունակել զուսումն ի դպրոցին աստուծոյ մասնակցութեան աւագ ուսուցչի։ 2) տալ Տէր-Մինասեանին դասրեկան ոռճիկ նրա»։

Գօրիսի ժողովուրդը և դպրոցի հոգաբարձութիւնը ձեռնասէր են մնում և միջոց ու հնարաւորութիւն չունեն չը ծառայով ուսուցչին՝ պակասութեան, թերութեան համար դպրոցից վռնտվածին ոռճիկ տալու։

Դպրոցը միջոց չունի մեծացած ուսուցիչներին վարձատրելու, ինչպէս կարող է հեռացրված ուսուցչին ևս վարձատրի, առարկում է հոգաբարձութիւնը։ Եթէ ասենք հոգեորականութիւնը առանց գործի ներքինը, խորը թաղանցելու է վճիռ արձակել, թերևս մեզ էլ ըմբռնա անուանեն։ Սակայն կարող են այսպեղ և որոշ ընկերական կապեր գործին այդ ընթացքը տուած լինել. այդ մեր գործը չէ, ամէն մարդ իր իւղով է տապակվելու, ասում է ժողովուրդը։ Մենք, մինչև իսկ սպասում էինք, որ դիւանատից կը հրամայէին հոգաբարձութեան՝ պ. Տէր-Մինասեանին ընդունել դարձեալ աւագ ուսուցիչ. սակայն այդ չարվեց, որովհետև խղճի խայթը իր պաշտօնի մէջ կը մտնէր այդ դէպքում։

Սրանով ես հրաժարվում եմ դպրոցի շուրջը պտտվող հարցերի մասին այլ ևս խօսելու կամ գրելու, եթէ տեղիք չը տան։

Սաղանդարեան

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

—

Մարտի 6-ին առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան մէջ, առևտրական բաժնի կառավարիչ Սիրիլվէի նախագահութեամբ խառը ժողով է կայացել 1906 թի նոյեմբերի 15-ի օրէնքի համաձայն մի քանի հարցեր քննելու առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների, գործարանների, պահեստների և գրասենեակների ծառայողների հանգստութեան ժամերը որոշելու համար։

(«Օ. Ե.»)

—«Т.-Пр.-Г.) լրագրի ստացած տեղեկութիւնների համաձայն Պետերբուրգի խոպարանատների դաշնակցութիւնը դեռ ևս բոլորովին կազմակերպված չէ, բայց շուտով կը վերջանայ։ Որովհետև մամուլի ժասում ծառայող բանւորները պահանջում են աւելացնել իրանց աշխատանքի վարձատիր, սահմանված ժամանակից դուրս աշխատելը ոչնչացնել և իրաւունք տալ իրանց ծառայութիւնից հեռացնելու տպարանական այն ծառայողներին, որոնց կուզենան։ Բացասելու դէպքում սպառնում են գործադուլ անել։ Տպարանատէրերի ժողովը վճռել է գործադուլների դէպքում լօկաուտ կազմել։ Ինչպէս յայտնի է, Մօսկվայում սկսված գործադուլների ազդեցութեան տակ գործադուլներ են առաջացել Պետերբուրգի մի քանի տպարաններում ևս. յայտնի դէպք, բանւորները չը համաձայնվելով նրանց պահանջներին, ծառայութեան են մտնում ուրիշ տպարաններում և իրանց բաց մնացած տեղերը լցնելու տակ են յայտարարում։ Դրա համար տպարանատէրերի ժողովը որոշել է հետևեալ միջոցին դիմել դիմադրութիւն ցոյց տալու նպատակով։ Տպարանատէրերի մէջ կը ցուցակագրվին տպարանից-տպարան փոխադրվող բանւորների անունները և այդ ցուցակները տուգելով այդպիսիներին չեն ընդունել։ Գործադուլի շնորհիւ «Издательское Дѣло» ակցիոներական տպարանում լօկաուտ տակ են ներկայումս 40 տեղ։ Որքան տեղեկացանք տպարանատէրերի միութիւնը մտադիր չէ ենթարկվել ու բանւորների պահանջներին և գերադասում է փակել տպարանները։

—Գործադուլ են արել Պետերբուրգում Լիշկիի և Սոլիշնայա տպարանները (50 հոգի) պահանջելով անտեսական են։ Մօսկվայի տպարանատէրերի լօկաուտի պատճառով գործադուլ են արել Պետերբուրգի բաժանմունքի Եակովլվ և Կուշնարէվի տպարանների բանւորները։ Գործադուլ են արել և մի քանի ուրիշ անպէտ գործարաններում և առաջարկված են պահանջներ։ Երրորդ շաբաթն է, որ շարունակվում է Գվարդէյսկի տնտեսական կոնակներ պատրաստող ընկերութեան արհեստանոցներում։ Տեղինովի կօշկակարների արհեստանոցի գործադուլը վերջացաւ բանւորների յաղթութեամբ։ Բաղաքի շրջանի գործակատարները իրանց տէրերին առաջարկել են հետևեալ պահանջները։

1) Իրաւունք ունենալ ապրել իրանց ընտրած բնակարաններում այն դէպքերում, երբ տէրերի տուած բնակարանները առողջապահական տեսակէտից անընդունելի են։ 2) ազատ իրաւունք ունենալ պատկանելու պրոֆեսիոնալ միութեան և 3) մնունդը բարելաւել։ Սեղանի մօտենալու պատճառով առաջարկել են նրանք հետևեալ պահանջները. պարանջների գները բարձրացնել 25—30%-ով և աշխատանքի ժամանակը սահմանել 10 ժամ։ Դռնապանները ժողով են կայացրել և որոշել են պահանջ յայտնել անտէրերին աւելացնելու իրանց ռոճիկները մինչև 20 բուբլի ամսական տօներին ազատ թողնել և օրինաւոր բնակարան տալ։ Բարդիսների ծառայողներն էլ որոշել են պահանջել իրանց տէրերից դադարեցնել տոմսակների վաճառումը բաղնիսները փակելուց առաջ։ Տպարանատէրերի օրինակը խրախուսել է և արհեստանոցատէրերին, որոնք նոյնպէս որոշել են առանձին միութիւն կազմել, Դարբնագործութեան մէջ գործադուլարար բանւորները վճռել են մի քանի կօօպերատիվ արհեստանոցներ հիմնել։ 21 ձեռնարկութիւնների ներկայացուցիչները ժողով են գումարել հացի թանկութեան մասին խորհրդակցելու, վճռված է դիմել քաղաքային դումային խնդրելով։ 1) Սեփական պահանջել առաջնակարգ ուտելեղէնների գները, 2) քաղաքի հաշվով քանալ հացի փուռներ և փոքրիկ խանութներ ուտելեղէններ վաճառելու համար, 3) ընտրել մի խառը մասնաժողով ընտրված քաղաքային վարչութեան և բանւորների ներկայացուցիչներից ուտելեղէնների գները կանոնաւորելու համար։

«Т.-Пр. г.»

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

3. Նալբանդեանի կօնցերտը.—Ներկայացումներ Արտիստական թատրոնում.—Ներկայացումներ Ալէքսանդրօպոլում

I

Զուրթակաղաք 3. Նալբանդեանի կօնցերտը գրաւել էր հանդիսականների մեծ բազմութիւն դէպի Թիֆլիսի երաժշտական դպրոցի դասլիցքը, մարտի 13-ին։

Ներկայ էին և երաժշտական դպրոցի դեկավարները։

Կօնցերտը գործեց ուժեղ տպաւորութիւն հասարակութեան վրա, որը վարձատրեց տաղանդաւոր յուզեալ հանդիսարանը ջերմ և բուռն ծափահարութիւններով։

Նալբանդեանին մենք լսել ենք նրա արտիստական գործունէութեան առաջին շրջանում, երբ նա եկել էր Թիֆլիս 1893 թուականին։ Այն, ինչ որ այն ժամանակ վեղեցիկ սաղմ էր, այժմ զարգացել է, հասունացել և ստացել որոշութիւն ու գոյն։

Նալբանդեանը ոչ միայն նուրբ կերպով նուագում է այն երաժշտական կտորները, որ գնում է իր ծրագրի մէջ, այլ և նրանց վերաստեղծում է, ապրով զգացմունք, իմաստ, հոգեբանական երևէյներ։ Նա գործում է բանաստեղծ-յուզեալների տպաւորութիւն։

Բացի ծրագրի մէջ նշանակված երաժշտական կտորներից, նա նուագեց բազմաթիւ ուրիշ երկեր և առաջ մեծ նիւթ գաղափար կազմելու նրա հմտութեան և տաղանդի որոշութեան մասին։ Նա ստիպեց ասուց համոզվելու, որ նա հասցրել է իր տեխնիկան կատարելութեան։ Նրա յուզեալը արտաբերում է մաքուր, նուրբ, գեղեցիկ ձայնի՝ բազմազան արտայայտութիւններով. յաճախ նա կարծես երգում է տալով ամբողջացած պարբերութիւններ։

Նա գեղեցիկ կերպով կատարեց Տարտինիի g—moll օնատան, Վիեատանի a—moll և-ցերը և ուրիշները։

Սեփական երկասիրութիւնները մեծ հաճոյութիւն գտան։ Նրանց մէջ կային արևելեան գծեր, մեղմաղեռ տրամաբրութեամբ։ Հասարակութիւնը շատ հաճոյեց մի եղանակ, որ կազմվել է «Կոռնկի» հիմնական եղանակի վրա։

Նալբանդեանը կը տայ երկրորդ ներկայացում Թիֆլիսում, առաջիկայ կիրակի օր, իսկ մինչև այդ օրը նա մտադիր է տալ մի կօնցերտ Ալէքսանդրապօլում, ուր նա ուղևորվեց երէկ երեկոյ։

Սիրող

II

Սկսած երկուշաբթի օրվանից Թիֆլիսի Արտիստական թատրոնում ներկայացումներ է տալիս մի նոր ռուս դրամատիկական խումբ, որ դիտաւորութիւն ունի մնալ Թիֆլիսում ամբողջ Մեծ Պասը։

Առաջին օրը ներկայացվեց Շելլերի Դոն-Կարլոսը, որը Թիֆլիսում ռուսերէն լեզուով շատ քիչ է խաղացվել։

Աչքի ընկնող դերասաններ հանդիսացան այդ օրը Բլումենտալ-Տամարին և Նեղիտով։

Բլումենտալը ունի Դոն-Կարլոսի դերի համար բոլոր արժանաւորութիւնները։ Նա տուեց հերոսական և ասպետական երիտասարդի տիպը, ոգեորված խօսակցութեամբ։ Նելիդով Ֆիլիպ II-ի դերում կարողացաւ տալ կենդանի հոգեբանական գծեր սպանիական բնական տիպի և թողեց տպաւորութիւն։

Միւս դերակատարները չը տուին աչքի ընկնող խաղ։

Հետաքրքրական է տեսնել դերասաններին ժամանակակից կանոնից վերցրած պիեսներում։

Տ. Կ.

III

Ամսիս 13-ին, երեքշաբթի երեկոյեան, խաղացվեց Լերմոնտովի «Դիմակահանդէս» պիեսան։

Պիեսայի բովանդակութիւնը աւելորդ ենք համարում բերել այստեղ, որովհետև ընթերցողներից շատերը ծանօթ են այդ պիեսային, որը անցեալներում գրված է եղել մի քանի անգամ նոյնպէս հայկական բեմերի վրա։

Գլխաւոր հերոս՝ Արբենինի դերը կատարեց Տէնսկին, որը ամբողջ 4 գործողութիւնների և 5 պատկերների ընթացքում շատ աջող տարեց իր դերը։ Տէնսկին կարողացաւ լրելիք կերպով արտայայտել խանդոտ և միաժամանակ չարահոգի մարդկանց շնորհիւ խաղած ու ճգնագործ ամուսնու հոգեկան զայրոյթի և տանջանքների բոլոր ելևէջները։

Իսմնովա խաղում էր Արբենինի կնոջ՝ Նինայի դերը, որը նոյնպէս աջող կերպով պատկերացրեց միամիտ, անմեղ և անբիծ կնոջ դրութիւնն ու այն տանջանքները, երբ լսում է չափից դուրս սիրող և սիրվող ամուսնուց, որ վերջինս պաղպղակի միջոցով թունաւորել է իրան՝ Նինային։

Իշխան Զվեզդիչի դերը կատարեց Բլումենտալ-Տամարին, որի խաղի մէջ անսպասելի սառնութիւն էր նկատվում։ Միաժամանակ պարոնը չէր սովորել իր դերը, որը մերթ ընդ մերթ աչքի էր զարնում։

Բարոնեսա Շտարալի դերում տ. Միխիկովան վատ չէր։

Մնացած դերակատարները իրանց խաղով նպաստում էին անսամբլի աջողութեանը։

Ցաւելով պիտի ասենք, որ այդ երեկոյ թատրոնի 3/4 մասը դատարկ էր։

Ցանկալի էր, որ ռուսական Միխայլովսկայան աշխատէր բեսիերաուարի մէջ մոցնել թատրոն յաճախող հասարակութեան համար աւելի հեռաքրքիր ընտրի կրող պիեսաներ։

X

IV

Հայ դրամատիկական խմբի անդամներից կազմված դերասանական մի խումբ տալիս է ներկայացումներ Ալէքսանդրօպոլում։

Առաջին ներկայացումը տեղի ունեցաւ կիրակի, մարտի 11-ին։ Խաղացվեց Դրէյերի «Տանտէր տարեկանները» պիեսը։

Ներկայացումը գրաւել էր հանդիսականների մեծ բազմութիւն։

Խումբը պէտք է ներկայացուցիչներ տայ մեծ պասի ընթացքում թէ Ալէքսանդրօպոլում և թէ Երևանում։ Դեռ ոչինչ յայտնի չէ, թէ կը գնայ արդեօք խումբը և Կարս ներկայացումներ տալու համար։

Փ.

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՋ

(Նամակ Խմբագրութեան)

—

Ճեմարան, մարտի 1-ին

Համակարծիք լինելով մեր ճեմարանից դուրս եկած ընկերների կոչին, տպված՝ «Հոսանք» ում և «Մշակ»-ում, մենք պահանջում ենք շուտափոյթ և անաչառ քննութիւն մեր դպրոցներում կատարված դէպքերի համար։

Այդ քննութիւնը անհրաժեշտ և հրամայողական պահանջ ենք դնում մենք հետևեալ պատճառներով։

1) Դպրոցների դէպքերը վառնգել են ամբողջ հասարակութեան ամենաէական շահերը։

2) Դպրոցների դէպքերը վիրաւորանք են հասարակութեան։

3) Դպրոցների դէպքերը վառնգում են մասաղ սերնդի ապագան։

Այդ բոլորը՝ փաքր ինչ հասկացողութիւն և բարոյականութիւն ունեցող հասարակութեան վրա ամենամեծ պարտականութիւնն է դնում, որ նա անպայման պահանջէ և ձեռնարկէ շուտափոյթ քննութիւն։ Աշակերտութիւնը խօսեց այդ մասին, խօսեցէք և դուք։ Անտարբերութիւնը պատիւ չի բերի։

(24 ստորագրութիւն)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Երևան, մարտի 8-ին

Հոգաբարձութիւնը խնդրում է տպագրել «Մշակի» մէջ հետևեալ հաշիւը։

Երևանի Մարիամեան օրիորդաց դպրոցի օգտին անցեալ փետրվարի 20-ին կազմած հերկոյթը տուեց հետևեալ արդիւնքը։ Մուտ. Ծախված տոմսակներից 529 ր. 20 կ., նուէրներից 165 ր. 15 կ., բուֆետից, աշակերտների ձեռագործից, կոնֆետի և ուրիշ խաղերից 341 ր. 80 կ. գումարը 1036 ր. 15 կ. Հանած՝ քաղաքային կլուբին դաշնակի վարձ 75 ր., օպերետային խմբին 40 ր., վենտայի և զինուորական երաժշտութեանը 45 ր., սաղանդարներին 12 ր., աֆիշաների տպագրութեան 10 բուբլի, բուֆետի, կարգի (удочка), կոնֆետաի, ձեռագործների պատասխանների և այլ խաղերի համար ծախքեր 84 ր. 37 կ., մարկաների 29 ր. 20 կ. մոր ծախքեր, կահկարասիների տեղափոխութեան, ծառաների, կառքերի, և այլն 59 ր. 20 կ. գումարը 354 ր. 77 կ., զուտ տրվել է 681 ր. 38 կոպէկ։

Հոգաբարձութիւնը ներկայացնելով այս հաշիւը, յայտնում է իր շնորհակալութիւնը. ամուսիններ Մարտիրոսիանցներին, օր. Գօրչինսկային և Պ. Պետրովսկիին, որոնք մասնակցելու կոնցերտային մասին, օրիորդներ՝ Է. Հասան-Զալալեանին, Ե. Տէր-Սարգսեանին, Մեծ բալասին, Ս. Եղիազարեանին, դպրոցի ուսուցչուհիներին, պ. պ. Լ. և Ա. Յարութիւնեաններին, Գ. և Լ. Եղիազարեաններին, որոնք իրանց անձնական ժամանակներում, մեծապէս օգնեցին երեկոյթի յաջողութեանը, ինչպէս և նուիրաբերող պարոններին։

Նախագահ հոգաբարձութեան՝

Ս. Տէր-Մարտիրոսեանց

—

Երևան, 9 մարտի

Այս տարվայ «Մշակի» № 48 Երևանից գրված «Հասարակութեան դատաստանին» յօդուածը Գ. Օ. Նուռուզիանեան ստորագրութիւնով շատ շատերը վիրագրում են ինձ։ Սրանով հրապարակով յայտնում եմ կասկածողներին, որ այդ ծածկանուն տակ գրողը ես չեմ։

Գ. Աղաղուլեանց

—

Ախալցխա, մարտի 9-ին

Ցաւանում եմ իմ և գաւառացիներս շնորհակալութիւնը հետևեալ անձանց, որոնք լսելով իմ դիմումը չը զլացան իրանց ունեցած աւելորդ գրքերով նպաստել Ախալքալաքի գաւառում ընթերցարանը տարածելու և գիւղական գրադարաններ կազմելու գործին։ Այդ անձնաւորութիւններն են. 1) Մայկօպարանի տիկին Թագուհի Եքսօսօբոլոյին, որից ստացել եմ 10 կոտ գիրք, Լէօն, Անհրանեանի և Ծերենցի գրքերից (տասնց կազմի մօտ 10 ր. արժողութեան)։ 2) Օր. Միքանոյշ Գիւլիզարեանին, որից ստացել եմ 160 օրինակ գրքոյկներ ընդամենը 16 ր. արժողութեան և 3) պ. Թուրէն Տէր-Գրիգորեանին, որից ստացել եմ զանազան գրքոյկներ, ընդամենը 5 բուբլի 53 կ. արժողութեան։

Կրկին և կրկին խնդրում ենք ձեռնհաս մարդկանց օգնել, որովհետև բացի նուէրները տեղ հասցնելուց ամէն մի գիւղում, որ գրքեր է ստանում, կազմում ենք խմբակներ, որոնք անդամավճարներով աւելացնում են գրադարանի գրքերը և կանոնաւոր հաշիւ պահելով չեն կորցնում ստացածները։ Ընդունում ենք նաև զրամական նուէրները։ Մեր հասցէն՝ Ахалцыхъ, учителю Нерсесу Теръ-Григорянъ։

Խնդրում եմ խմբագրութիւնից ի միասութիւն նուիրատուների և ի քաջալերութիւն բարի գործի տեղ տալ երկուողիս մօտակայ համարներից մէկում։

Ուսուցիչ՝ Ներսէս Տէր Գրիգորեան

—

Սուրմալի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խոնարհաբար խնդրում է տպագրել հետևեալը։

Նախկին երեցփոխ Ստեփան Գրձելեանի օրով Սուրմալում սովորութիւն մտցրվեց որ հանդուցեալի համար փոխանակ քէլէխ սարքելու, նուիրեն հայոց դպրոցին փոքրիկ գումար՝ ըստ կարողութեան։ Քէլէխը վերացաւ, որից շահվեց դպրոցը մի կողմից, իսկ հասարակութիւնը՝ միւս կողմից, որովհետև նա ազատվեց աւելորդ, շապ ծախսերից։ Տարաբախտաբար, այս սովորութիւնն երկար չը տեւեց. փակվեց դպրոցը և քէլէխը կրկին մտաւ սովորութեան մէջ։

Երբ մեզ ընտրեցին հոգաբարձուներ, մենք սկսեցինք ժողովրդին քարոզել, թէ և զուր ժողովուրդը փչացնում է փողը քէլէխների համար, որ ննջեցեալը դրանից ոչ մի շահ չունի, որ հարբելով քէլէխներում՝ աւելի անպատուութիւն է ննջեցեալին։

Ժողովուրդը լսեց մեզ, համակրանքով վերաբերվեց մեր ասածներին և ցանկացաւ կրկին վերացնել քէլէխը և նրա փոխարէն որոշ գումար գումար նուիրել դպրոցին, ինչպէս առաջ էր։ Եղան դէպքեր և հանդուցեալի ազգերը ճիշտ կատարեցին իրանց որոշումը և փող նուիրեցին դպրոցին քէլէխի փոխարէն։

Սակայն, ոչքան այս երևոյթը գովելի է և արժանի խոր խրախուսանքի ու քաջալերման, այնուամենայնիւ մեզ մօտ կան անհասակներ, որոնք հակառակ են այս նորամուծութեան։ Դրանք՝ ի հարկէ, քահանաներն են։ Քահանաների շահը չէ թոյլատրում, որ վերացվի քէլէխը, որովհետև դրանով նրանք կը զրկվին շաղ «սուրբ սեղանից» և ճոխ հաշից...

Եւ. ահա քահանաները հակառակ մեզ իրանց օրինակով ուզում են ժողովրդին հաւատացնել, որ քէլէխը վերացնելը մեծ յանցանք է հանդուցեալի հոգու համար։ Ահա փաստեր։

Անցեալները վախճանվեց Ալի գիւղի քահանայ Տէր-Դաւիթը և թաղվեց Սուրմալում։ Հոգաբարձուները զիմում են հանդուցեալի ազգերին յորդորելով քէլէխ չը սարքել և առաջարկում են թաւշեայ մատեան՝ որ և է գումար նուիրելու դպրոցին ի յիշատակ հանդուցեալի։ Քահանաները սկզբում սաստիկ հակառակվել են և մեր գործակալ Յովսէփ քահանայ Առիւծեանը նրանց կոդմակից է եղել։ Վերջն ամաչցնելով գործակալին՝ հանդուցեալի ազգերը նուիրում են դպրոցին 30 բուբլի։ Գործակալ Առիւծեանը 200 բուբլի ինքը փոխ է տուել փառաւոր քէլէխ սարքելու համար, վերցնելով գրաւական խաղաղութեան տոմսակը։ Սրանից յետոյ վախճանվում է Ներսէս քահանայ Տէր-Պետրոսեանի մայրը։ Տէր Ներսէսը սարքում է փառաւոր քէլէխ և ցոյց մարդկանց և մեր ջգրաւ գնում է «սուրբ սեղանի» վրա 35 ֆունտանոց շաքար, որովհետև մենք ամենքին ասում էինք, որ «սուրբ սեղան» և «խօնչանոր» աւելորդ բաներ են։

Ամբոխի վրա տպաւորութիւն գործելու համար, «սուրբ սեղանը» մեծ գլուխ շաքարով և մեծ ամանով գինին բաղարի ծայրից անկացրին բաղարի մէջով, որպէս զի ժողովուրդը տեսնէ և ասէ՝ «Եթէ սուրբ սեղանը» աւելորդ բան է, բան ինչու քահանաները իրանք են շինում...

Տեսնելով այդ, մենք ասացինք բաղարի մարդկանց. «քահանաներն այդ արին կոյր ժողովրդին խաբելու համար. եթէ այսօր Տէր-Ներսէսն է ուզում Առիւծեանին «սուրբ սեղան», վաղը կուզուէլ փոխարինաբար, երբ կը վախճանվի նրա մայրը...»

Տէր-Ներսէսը տալիս է ստորագրութիւն հոգաբարձու. Զարէքեանին որի մէջ ասում է, թէ ինքը պարտաւորվում է ամէն տարի, քանի ինքը կենդանի է, ի յիշատակ իր հանդուցեալ մօր նուիրել դպրոցին 10 բուբլի։ Հիմնվելով այս թղթի վրա, հոգաբարձու Շուղարեան դիմում է Տէր-Պետրոսեանին և խընդրում խոստացած 10 բուբլի, սակայն նա մերժում է, ասելով, որ նրան չէ ուզում ճանաչել։

Այն ժամանակ Շուղարեանը խնդրում է տալ գոնէ 12 ր. 50 կ. մանրի փողը, բայց քահանան կրկին մերժում է, ասելով, որ չունէ։ Շուղարեանը խնդրում է ստանալ ի հաշիւ Ներսէսեանի, որը նոր էր ուզում պակվել, 10 բուբլի և գուրս գալ պարտքում, իսկ նրան տակաւ քահանան բարկանում է անվերջ. «թող նադդ տայ, եթէ չունի փող, թող չը պակվի»... Այժմ մենք չը գիտենք թէ ինչը կը ստանանք այս քահանայից 22 ր. 50 կոպէկ։

Ժողովուրդը պատասխանում է բոլոր ուզարկել քահանաների դէմ, որովհետև սրանք հարանիքներին սաստիկ ճնշում են և կամայական կատարել են տալիս իրանց պահանջները, քանի որ հարանիքի պատասխանութիւնները անսովոր են և խախտել այլևս անկարելի է։ Տալիս են՝ որը 30 ր., որը 25 ր., որը 20, որը 15, որը 10 ր.։ Այս տարի մի ամենաչքաւոր մարդուց առան 14 բուբլի։

Հոգաբարձուներ՝

Ստեփաննոս Գրձելեանց

Արշակ Շուղարեանց

—

Բաքու մարտի 11-ին

«Ժամանակ» լրագրի № 50-ում տպագրված էր մի նամակ Կասանալօգլիից, որտեղ ասված էր թէ՝ «Մուշեղ Տէր-Օհանեանը հօրեղբօր որդիներին էր և գրանով էլ որոշ ազգականների նախանձն էր շարժել. միևնոյն ժամանակ յիշել էր, որ «Մշակի» № 27-ի մէջ գրուածը զրպարտութիւն է» և այլն։

Սրանով մենք յայտնում ենք, որ հանդուցեալ Մուշեղը մեր եղբօրորդին էր և ոչ թէ հօրեղբօր և պիտում ենք, որ նա անձնական թշնամիներ ամենևին չէ ունեցել։

Մուշեղը անմեղ զոհ դնաց, «Մշակի» № 27-ի մէջ գրված յօդուածի համար, որը սկզբից մինչև վերջը զուտ ճշմարտութիւն էր։

Մենք մինչև այժմ չէինք տեսել ու լսել, որ մեռելների ետևից անիծող ասեր հնարէին, մեռելներին զրպարտէին, բայց այդ ասերն ու զրպարտութիւնները այսօր տպագրված են «Ժամանակ»-ում № 50-ի էջերում։

Հանդուցեալ Մուշեղի հօրեղբայրներ՝

Ստեփան Տէր Օհանեան և

Աւետիս Տէր Օհանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Աղվանդարների օգտին ստացանք. 1) Դարսից-Յարութիւն Բարսեղեանից 10 բուբ., 2) Կարասու-Բազարից—մի խումբ երիտասարդների մէջ հանգանակված 15 բ.— Գ. Ամիրանեանցի, Մ. Մինասեանցի և Գ. Թումանեանցի միջոցով, 3) Նուխեցի Բաղդասար Գալստեանից 10 բ., 4) Կալաքաշ կայարանից—Իսրայէլ Ղազիեանից 10 բուբլի։

—

Կովկասի Փոխարքան ներքին գործերի մինիստրի հայտնողութեան է ուղարկել Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան միջնորդութիւնը՝ 500,000 բուբլի փոխառութիւն բաց թողնելու Թիֆլիս քաղաքին, ի նկատի ունենալով նրա ֆինանսական դժուարին դրութիւնը, այն 1500,000 բուբլուց, որ ներքին գործերի մինիստրութիւնը յայտարարել է անվճարունակ նահանգների համար. այդ փոխառութիւնը քաղաքը ծածկելու է մինիստրութեան հատատած հիմունքներով։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը, քննելով հայ-թուրքական ընդհարումներից վնասված տանտէրերի և վաճառականների խնդիրները, որոնցով խնդրել են վերացնել իրանցից քաղաքային զանազան տագնապները մօտ 25,000 բուբլի, վարչութեան կողմից կայացրած որոշման համաձայն, հնարաւոր գտաւ վերացնել ընդամենը 1065 ր. տագնապը։

—

Արդէն 4-րդ օրն է, Բուխարայում պաշարողական դրութիւն է յայտարարված.

—

Թիֆլիս է ժամանել Թերեկի շրջանի կառավարիչ գեն.-լեյտ. Ա. Մ. Կոլիբաբինը։

—

Թիֆլիսի զեն.-նահանգապետի կարգադրութեան համաձայն մարտի 13-ին դադարեցրել են, ռուսերէն «Грузинская Мысль» շաբաթաթերթը, որը լոյս տեսաւ կիրակի, մարտի 11-ին. երդ. հաւատ. Գ. Բ. Գվազավայի խմբագրութեամբ։ Լրագրի տառերը յարքունիս են զրաւված։

—

Երէկ, մարտի 14-ին, Թիֆլիսում, ցերեկվայ ժամի 4-ին, ծխախոտի գործարանատէր Յովհաննէս Բօղարջանի վրա երկաթուղու վարչութեան մօտ յարձակում գործեցին չորս անձ և խլեցին նրանից 300 բուբլի գումար։

—

Ս. Մ. Զիարգիշվիլուն թոյլատրված է հրատարակել ամենօրեայ մի լրագիր վրացերէն լեզուով «Զվէնի դրա» (մեր ճանապարհը) խորագրով։

—

Ի. Ի. Մաճուլիշվիլին թոյլատրված է հրատարակել շաբաթաթերթ «Դրօէբա» (ժամանակ) անունով։

—

Գանձակից գրում են «Закавк.» լրագրին, որ մօտ օրերս, նահանգապետ պ. Կոլպաիօվը մեկնում է քննելու նահանգի ոստիկանական թաղական վարչութիւնները։

—

Մարտի 12-ին ժողովրդական համալսարանների ընկերութեան մի քանի անդամների նախաձեռնութեամբ և մասնակցութեամբ խորհրդակցութիւն կայացաւ մամիզական ինտելիգենցիայի հետ Թիֆլիսի աղքատներին մամիզական մասի համար դասախօսութիւններ և դասընթացքներ կազմակերպելու հարցի վերաբերմամբ։ Խորհրդակցութեանը ներկայ էին մօտ 10 մամիզական-ինտելիգենտներ։ Որոշված է մարտի 23-ին, 6-րդ քաղաքամասում, Պարուն-Բեգովի քարվանսարայում, ձրի դասախօսութիւն կարդալ։ Դասախօսութիւնը կը կարդայ ազրբէջանի լեզուով «Մուլա Նասր-Էդդին»-ի խմբագիր Մամեդ-կուլի Զաղէն։ Նէյման-Զաղէին յանձնարարված է տպել թուրքերէն լրագիրներում ժողովրդական համալսարաններին և դասախօսութիւններին վերաբերեալ յօդուածներ, իսկ Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի տնօրէն պ. Սուլթան-Մեջիդ-Իգանիվին յանձնարարված է թարգմանել մինչև մարտի 23-ը ժողովրդական համալսարանների ընկերութեան կանոնադրութիւնը թուրքերէն լեզուով։

(«Т. Л.»)

—

Բաքուի տատասանուր զասրալ-նասանգաղաքը պատերազմա-գաղտային դատարանին է յանձնել զինված կողոպտման և գնդասան թաչատուր թաչատրեանի սպանութեան մէջ կասկածվող Դօնեան շրջանի բնակիչ Գէորգի Դէգտարէվին և սղնախեցի Տիգրան Երամօվին։

—

Երեքշաբթի, մարտի 20-ին, քաղաքային դումայի շինութեան մէջ նշանակված է Թիֆլիս քաղաքի պրոմիալային ուբբ վճարող բոլոր ազգային հասատատութիւնների տերերի ընդհանուր ժողով՝ մի մասնաժողով ընտրելու համար, որը զբաղվելու է յիշեալ հասատատութիւնների ծառայողների նօրմալ հանգիստ հասատատելու վերաբերեալ պարտադիր կանոններ մշակելու խնդրով։

—

Կովկասեան մուզէումի և հասարակական գրադարանի վերատեսուչը դիմել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրելով յայտնելու համար—քաղաքային ինքնավարութիւնը հնարաւոր կը գտնի, արդեօք, մուզէումի և գրադարանի շինութեան համար քաղաքի կենտրոնում յատկացնել 120 քառ. սաժ. մի հողաբաժին, կամ թէ հարկաւոր գումարը կը նուիրէ այդպիսի հողաբաժին ձեռք բերելու համար։

—

Մեզ խնդրում են տպագրել, որ Զիգրաշէնի հայոց դպրոցը, ուր սովորում են 120 աշակերտ-աշակերտուհի, գրեթէ բոլորը չքաւոր դասակարգից, գտնվում է փակման վտանգի մէջ, նիւթական միջոցների սղութեան պատճառով։ Դպրոցի հոգաբարձութիւնը նկատի ունենալով, որ անկարելի է և վերին աստիճան ցաւալի երեխաներին փողոց նետել՝ ուսումնական տարին չը լրացած, ամսիս 18-ին, Թիֆլիսի ժողովարանում տալու է մի ներկայացում դպրոցի օգտին։ Թիֆլիսի հայ հասարակութիւնը թող չը պակաս իր լսումներով նիւթապէս օգնութեան հասնելու յիշեալ դպրոցին, որով հնարաւորութիւն կը տայ հոգաբարձութիւնը գէթ այս տարի դպրոցի փակման վտանգից ազատելու։

—

Թիֆլիսի նահանգապետ թոյլատրել է Արշակ Սեղբոսովին, Սիմէօն Միրզոյեանին և ուրիշներին՝ ոստիկանական պահակախմբեր հաստատել իրանց գործարանները, շէնքերը և այլ ունեցած սեփականութիւնները պաշտպանելու համար, որոնք ընկած են Թիֆլիսի գաւառի Սօղանլուխի ճանապարհին։

—

Երէքարաքարշի վրա հսկող մասնաժողովը մարտի 18-ին դիտելու է Անսնի ընկերութեան բոլոր վագոնները, որոնց մեծ մասը այժմ անպէտք են գործել։

—

Ստացանք Հանրի Մարիոնի «Կնոջ հոգեբանութիւնը», թարգմ. Կ. Ս. Թումանեանի, 280 երես, կազմած, հրատարակութիւն Գաբրաշեանի։

—

Մարտի 13-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Պուշկինսկի փողոցում ոստիկանութիւնը ձերբակալել է Սղնախի գաւառի Գուրջանի գիւղի բնակիչ Ալ. Մերաբաշվիլին, առաջուց կազմած ցուցակով փող հաւաքելիս՝ 1—2 բուբլի իւրաքանչիւր խանութից։ այդ փողերը ապագայ գործադուլներին գործածելու նպատակով։ Մերաբաշվիլին ձերբակալվել էր դեռ 1906 թ. դեկտեմբերի 17-ին Մամա-Դաւիթում Չգուբոտ

թեան շինութեան մէջ կայացաւ Բագուի մահմեդականների ժողովը, որը գումարվեց քաղաքային խորհրդի ձայնաւորների առաջիկայ ընտրութիւնների վերաբերեալ հարցերը քննելու նպատակով։ Նախագահ ընտրվեց Իսրաֆիլ Հաջիեվը, որը յայտնեց, որ թէպէտ ներկայումս խորհուրդը միջնորդութիւն է յայտնել մահմեդականների համար սահմանափակումները վերացնելու վերաբերեալ քաղաքային խորհրդի ընտրութիւնների համար, որին անկասկած, բաւարարութիւն կը տրվի, բայց մահմեդականները չը պէտք է շահագործեն նրան և ընտրեն դումայում բացառապէս մահմեդականներին։ Բագուցիների մէջ կան շատ անձեր, առանց ազգի և կրօնի խտրութեան, որոնք կարող են օգուտ տալ քաղաքին և որոնց չը պէտք է սևացնել ընտրութիւններին։ Հաջիեվի առաջարկութիւնը ընդունվեց միաձայն և ժողովը որոշեց կազմել ձայնաւորների համար առաջարկվելիք թեկնածուների ընդհանուր ցուցակներ և այդ նպատակով նորից հաւաքվել միւս ազգերի ներկայացուցիչների հետ միասին։ («Б.»)

—

Կարսի շրջանի զինուորական նահանգապետը տեղեկացրել է, որ նա ոչինչ դէմ չունի, որ Կարս քաղաքում, համաձայն տեղական վաճառականների միջնորդութեան, հաստատվի պետական բանկի բաժանմունք։ Այդպիսի բաժանմունք հէնց այժմ չը բացվելու դէպքում, գեներալ-մայոր Բաթիշը նպատակայարմար է գտնում բանկային բոլոր գործարութիւնները կենտրոնացնել Կարսի պետական գանձատան կից։ Կարսի նահանգապետի հաղորդագրութեան համաձայն, Կարսում, 1906 թ. առևտրի տարեկան շրջանառութիւնը եղել է 8,603,600 ռուբլու, և բացի դրանից նոյն տարին կապաներ և մատակարար գործողութիւններ կատարվել են 400,000 ռուբլու։

—

Նոր-Բայազէտից գրում են, որ մարտի 5-ին, Մեծ Կարակօյունլու գիւղում կալանաւորվել է փախստական Հիւսէյն-Կուլի-Ագալու-Նուրազ-Մաշադի-Մահմէդ-օղլին, որ փախել է Սիբիրից 1902 թ-ին։ Նոյն գիւղում 4-րդ գաւառամասի պրիստաւը երկար հրացանագու թիւն է ունենում պահակների հետ, որի ժամանակ սպանվում է Մեծ Կարակօյունլուում թագնվող աւազակ Նաշաֆ-Կուլի-Իմամ-Էրդիօղլին, և ձերբակալվում են նրա խմբի 5 աւազակները, որոնցից խլում են հրացանները և փամփուշտները։ Բռնվածներից իւրաքանչիւրը մեղադրվում է մի շարք յանցանքների մէջ։

—

Պետերբուրգից ստացված տեղեկութիւնների համաձայն, մօտիկ ապագայում տեղի է ունենալու պ. Շաստչենկովի նախագահութեամբ գործող տարիֆային կոմիտէի նիստը՝ Բաքուից արտահանվող նաւթը Բաթում և Նովոռոսիյսկ տեղափոխելու համար ստացվող տարիֆը վերաքննելու համար։

—

Գանձակի կայարանից հաղորդում են, որ մարտի 10-ին առաւօտեան 8 ժամին, ապրանքատար գնացքի մեկնելու ժամանակ, յիշեալ գնացքի պահապան Թեոդոր Պարիզանը հրացանի հարուածով վիրաւորել է ձախ ոտից բեմօնտի բանւոր Աբդուլ-Ջաֆար-օղլուն, որին պահապանը ընդունել է չարագործի տեղ։

—

Սղնախի գաւառից գրում են նեկաս սադրագրամի փեսան է, շատ ժամանակներից ի վեր իր ազդեցիկ կուսակիցների օժանդակութեամբ ջանք ու ճիգ էր թափում ցոյց տալու, հաստատելու, ապացուցելու բելժիկների բաւական գործունէութիւնը իր բոլոր պարգևներով։ Շնորհիւ եռանդուն գործունէութեան և բաղմազիմի հաղորդակցուցիչ զրուցաբանութիւնների, կարճ ժամանակում պարսից ազգաբնակութեան զանազան խաւերում առաջացաւ մի սարսափելի հակակրանք բելժիկների նկատմամբ, որի լիակատար արտայայտիչ բոնկումը տեղի ունեցաւ Ամրպատակի մայրաքաղաքում՝ ազդեցիկ հոգևորականների և առաջնակարգ աշխարհական գլխաւոր հաղորդակցութիւնների կայարաններում և պատրաստի պահել ռազմամթերքներ։ Միաժամանակ կարգադրված է պահակները ուժեղացնել բանւորական և գործարանական կենտրոններում։ («Р. В.»)

—

Գուրկոի ընկեր Լիդվալը անյայտացել է։ Դատաստանական պրիստաւը անկարող է կոչնաթուղթը նրան յանձնել, որովհետև նա, իբր թէ, գնացել է Մոսկվա։ Մինչդեռ Մոսկվայի հաստիքների սեղանը յայտնում է, որ Լիդվալի գալու մասին իրան յայտնի չէ։ Այդ հանգամանքը դրդել է Լիդվալի պարտատէրերից մէկի հաւատարմատարին դիմել հետեւեալ վճռական միջոցին. նա միջնորդութիւն է յարուցել ընդունելու, որ Լիդվալը անհետ կորած է և նրա գործի վրա խնամակալութիւն նշանակվի։ («Сегодня»)

—

Մարտի 4-ին ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտր. կոմ. քննութեան ենթարկելով կուսակցութիւնը լեգալիզացիայից մերժելու խնդիրը և անկանոն համարելով մերժման պատճառաբանութիւնները, որոշել է բողոք ներկայացնել կառավարիչ սենատին։ («Русь»)

—

Կայսերութեան մատակարարական գործի ժամանակաւոր կառավարիչ Գերբէլը տեղեկացրել է Կովկասի Փոխարքային, որ ներքին գործերի մինիստրութեան կից կազմված յատուկ մատակարարական մասնաժողովը 715 ռուբլի է յատկացրել՝ իբրև փոխատուութիւն տալու մատակարարական և սերմացուի պէտքերը հոգալու համար Գօրու գաւառի Լաչաուրի և Կնուգօ գիւղերի բնակիչներին, որոնց ցանքերը անցեալ տարի փչացան շուտ հասած սառնամանիքներից։

—

Պետերբուրգում սկսել է լոյս տեսնել «Кузнецъ» և «Экипажникъ» պրոֆեսիոնալ լրագիրների առաջին համարները։

—

Ներկայումս երկաթուղիների ծառայողների մէջ ներկայումս ամենսահայի մասին կազմվում է մի նախագիծ, Պետական Դումային ներկայացնելու համար։ Այդ պետիցիայի պատճէնը ուղարկված է գաւառական երկաթուղիների վարչութիւններին ստորագրելու համար։ («Новь»)

—

Ռուսաստանի արտաքին առևտուրը զգալի հրպով պակասում է։ Այս տարվայ սկզբում ամիս ու կէսվայ ընթացքում մեր արտահանութիւնը պակասել է 116—86 միլիոնի, կամ 25%, իսկ ապրանքների ներմուծումը արտասահմանից՝ 88—68 միլիոնի, այսինքն՝ 20 միլիոնի։ Շատ տարի է, որ մեր արտաքին առևտուրը չի հասել այսքան աննշան չափերի։ («Русь»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, փետրվարի 22-ին

Տեղիս մաքսային և պօստային միացեալ վարչութեան մէջ փետրվարի 20-ին արտաքին գործերի մինիստրից ստացվեց մի պաշտօնական զեկուցագիր, որով կառավարութիւնը և ազգային սահմանադրական խորհրդարանը ծանուցանում են, թէ վերոյիշեալ թւականից պարսից տէրութեան մէջ գանվող բոլոր պօստային հաստատութիւնները, որոնք մինչև այժմ կցված էին մաքսային հիմնարկութիւններին և կառավարվում էին բելժիկների ձեռքով, պէտք է գործեն առանձին՝ միանգամայն դուրս գալով բելժիկների հովանաւորութեան տակից և կառավարվեն պարսկական կառավարիչների զեկավարութեամբ։ Պօստային հաստատութիւնների գլխաւոր վարչութիւնը կամ հրահանգիչ մարմինը գտնվելու է մայրաքաղաքում, և ներկայում, ինչպէս ընդհանուր վերահսուչ-կառավարիչ նշանակված է Միրզա Ջաւադ խան Սէիդ Դովլէ։

Պարսկաստանի պարսիկները սկսեցին հալածել և ամբաստանել բելժիկներին, անուանելով նրանց՝ կողոպտիչ, յափշտակիչ, խարդախ, պարսիկների դրամով մարդ գարձող և ուրիշ սոյնանման ածականներ տալով նրանց։ Վերջին ժամանակներս երբոր այստեղ ազատագրական սրբազան խօսքը հնչվեց և երբոր սովորութիւն դարձաւ մզկիթներում ազատօրէն քարոզել, ճառել և բացարձակօրէն կառավարութեան թերութիւնները ցոյց տալ, հալածանքը բելժիկների դէմ աւելի սաստկացաւ և զրեթէ պարսիկ ազգաբնակութեան բոլոր խաւերում կազմվեց մի համոզմունք, մի դիտաւորութիւն—արտաքսել բոլոր բելժիկներին պարսից մաքսատներից և պօստատներից։ Սակայն երկու այսպիսի խոշոր հիմնարկութիւններ միանուագ կորզել բելժիկների ձեռքից, չափազանց դժուար էր պարսիկների համար։ Ուստի խոհեմութիւն համարեցին նախ և առաջ պօստային հիմնարկութիւնը զատել, վերցնել, ապա ձեռնամուխ լինել մաքսատան գործին, որ և իրաք տեղի ունեցաւ—պօստատունն ի մեծ ցաւ բելժիկների դուրս եկաւ վերջիններիս հովանաւորութեան տակից և անցաւ պարսիկ կառավարչի ձեռքը յանձնվ Միրզա Ջաւադ-խան Սէիդ Դովլէի։

Փետրվարի 24-ին, երեկոյեան ժամի 4-ին, տեղիս կաթոլիկ լազարիստ միաբանութեան հովանաւորութեան ներքոյ գանվող վարժարանում տեղի ունեցաւ աշակերտական երեկոյթ։ Հանդիսի ծրագիրը կազմված էր բաւականին ճոխ և բաղկացած հետաքրքրական նիւթերից, որոնց արտասանութիւնը կատարվեց ֆրանսիական լեզուով և բոլորը, չնչին բացառութեամբ, հայ աշակերտների ձեռքով։ Հրաւիրված էին հանդիսին գրեթէ բոլոր եւրոպացիները և հայ ու պարսիկ հասարակութեան ընտիր դասակարգը։ Բոլոր դերակատարները սքանչելի կատարելագործութեամբ կատարեցին իրանց ստանձնած դերերը, որոնք պատրաստվել էին վարժարանի տեսչի և իր օգնականի զեկավարութեամբ։ Նոյնիպէս ֆրանսիացիները, տեսնելով այսպիսի մեծ շնորհք և ճշդիւտ արտասանութիւն երբեմն հարցնում էին թէ մթէ դերակատարները հայ պատանիներ էին։ Հանդէսը վերջացաւ երեկոյեան ժամի 9-ին։ Հանդիսականները միանգամայն գոհ զգացմունքներով դուրս եկան թատերասրահից՝ իրանց խորին շնորհակալութիւնը յայտնելով վարժարանի վարչութեանը։ Լ. Գէորգեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻԱ

Իտալիայի ազգաբնակութիւնը. — Մի քանի տարի առաջ Իտալիան մէկն էր այն երկիրներից, որոնց բնակիչների թիւը աւելանում էր արագութեամբ։ Այսպէս 20 տարվայ ընթացքում իր բնակիչների թիւը 28,000,000-ից բարձրացաւ 33,000,000 միլիոնի։ Բայց մի քանի տարիներից ի վեր նկատվում է հակառակ երեոյթը։ Նախ՝ ծնունդները՝ մաւվան դէպքերի հետ բաղդատելով պակաս զգալի են, երկրորդ՝ գաղթականական հոսանքը հետզհետէ սկսում է խոշոր չափեր ստանալ։ Ամբողջ գիւղեր դատարկվում են։ Եւ դրա պատճառը գիւղական համայնքների խիստ աղքատութիւնն է։ Հողագործական բիւրէջի տեղեկաբերը, պարբերաթերթում, պատգամաւոր Կասկանի տալիս է հետեւեալ տեղեկութիւնները։

1901 թ. բնակչութեան աճումը լինում էր 7,38 առ հազար, 1906 թ. յունվարի 1-ին այդ տոկոսը եկել էր 6,1-ի։ Վերջին 15 տարիների ընթացքում, մինչեռ ազգաբնակչութիւնը հետզհետէ աւելանում է Պիեմոնտում, Լոմբարդիայում և Վենետիկում, որտեղ բարգաւաճ դրութեան մէջ է ինդուստրիան, ընդհակառակը միւս գաւառներում նուազում է ապշեցուցիչ չափերով։ Լադիումի մէջ 17 առ հազարից, իջել է 10,6-ի, Ուբիյլի մէջ՝ 12,20 ից, 6,2 ի, Սիկիլիայի մէջ՝ 10,76-ից, 2,7-ի, Կամպանիի մէջ՝ 4,77-ից, 1,1-ի, Աբրուցցիայի և Մոլիզէի մէջ՝ 4,77-ից, 0,6-ի։ Եւ այսպէս շարունակաբար։ Իսկ երկրից դուրս աշխատանք ու բաղդ որոնողների թիւը հասնում է տարեկան մի միլիոն հոգեկան քանակին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

13 մարտի

ՎէՎէ, 12 մարտի։ Այսօր ընդհարում եղաւ ժանդարմների և շօկոլադի գործարանների գործաթող բանւորների միջև, որոնք կամենում էին ներս մտնել Նէսալէի գործարանը։ Ժանդարմները կրակեցին։ Վիրաւորված են 4 գործաթողներ և երկու ժանդարմներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Մարտի լոյս 13-ի գիշերը յանկարծակի վախճանվեց Պետերբուրգի հեռագրական գործակալութեան կարգադրիչ Սերգէյ Սեմենովիչ Տրուբաչէվ։

ՎԷՅՄԱՐ, 13 մարտի։ Լանդտագում, Վիկնայի համալսարանի օտարազգի ուսանողների հարցը քննելու ժամանակ, պատգամաւոր Բեխտհօֆէնը պահանջեց, որ ազգմինարացիան միջոցներ ձեռք առնէ ռուս ուսանողների դէմ, որոնք հանդիսանում են անցանկալի հանդէսներ։ Ուրիշ պատգամաւորներ կառավարութեան առաջ առին թէ կայ միջոցներ ձեռք առնել, որովհետև օտարազգիները ոչ մի անկարգութիւն առաջ չեն բերել։

ԲՈՒԽԱՐԷՍՏ. 13 մարտի։ Կանտակուզէնի կաբինէտը հրաժարական տուեց։ Նոր կաբինէտի կազմելը յանձնած է լիբերալ կուսակցութեան պարագլուխ Ստուրդզին։ Կաբինէտը արդէն կազմված է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԷՅ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մասնաբ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԼՏԻՆԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—1—2 ժ. ներքին և երեխայոց ծանրնաստ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԻԱ—1½—2 ժ. մանրաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼԱՀԱՑ ԼԵԶՈՒԻ
Աշխատ. Դր. Վանցեանի
Գինը 75 կոպ.
Դիմել՝ Թիֆլիս, գրախանութ «Գուտտենբերգ». Նոյն տեղ վաճառվում է Շիրվանզադէի «Պատուի համար» դրամա, չորս արարուածով, գինը 60 կ.։ 1—3

Թիֆլիսի Ժողովարան
Ուրբաթ, մարտի 16-ին 1907 թ. նշանակված է պ. պ. անդամների ընդհանուր ժողով քուէարկելու աւագների թեկնածուների և վերատուող յանձնաժողովի անդամների պակաս թիւը։
առ. (11, 16,) 1—2

ԵՐԿԱԹՈՒՂԱՑԻՆ ԳՆԱՑՔԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում
Պօստատար 1 ժամ 24 ր. ցերեկվայ
Մարդատար 8 » 5 » առաւօտեան
» 11 » 8 » գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու
Մարդատար 9 ժամ 13 ր. առաւօտ.
Պօստատար 7 » 48 » երեկոյեան
Մարդ-ապրանք. 11 » 38 » »
Թիֆլիսից դէպի Երևան
Պօստատար 12 ժամ 40 ր. գիշերվայ

VIII Դասատան մի հայ օրիորդ ցանկանում է դասեր ունենալ սենեակի և ճաշի փոխարէն. հասցէն իմանալ «Մշակ»-ի խմբագրատանը։ 1—5

Լոյս տեսան
ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԱՇԽԱՏ.
1. Թուաբանական խնդիրներ և օրինակներ պրակ Ա. խնդիրներ և օրինակներ հարիւրի շրջանում։ Խնդիրները դասաւորված են տեսակներով։ I և II տարի։ Բ. տպագրութիւն 30 կոպ.։
2. Թուաբանական խնդիրներ և օրինակներ պրակ Բ. խնդիրներ և օրինակներ ամբողջ և անուանական թուերով հազարի շրջանում։ Խնդիրները դասաւորած են տեսակներով։ III տարի։ Բ. տպագրութիւն 30 կոպ.։
3. Թուաբանական խնդիրներ և օրինակներ պրակ Գ. խնդիրներ և օրինակներ բացարձակ մեծութեան ամբողջ և անուանական թուերով։ Չորրորդ տարի (I դասատուն)։ Բ. տպագրութիւն 30 կոպ.։
4. Թուաբանական խնդիրներ և օրինակներ պրակ Դ. տեսութիւն կոտորակների և ընդհանուր կանոններ։ Հինգերորդ տարի (II դասարան) 40 կոպ.։
5. Պատրաստ է տպագրութեան համար. համեմատութիւններ և երեք կանոններ ըստ Շապշնիկովի և Վալցովի։
Դիմաւորով գնողներին բաւարար զեղչ։
Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну. 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վեչեամինօվսկայա փողոց № 8.
(ք. հ. շ.) 37—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զահարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
ՏԷԼԷՖՕՆ № 1087
Սօլոլակ, Լերմոնտովսկայա փող., 10.
(ա. օ.) 119—150

Դեկտեմբերի 27-ին, 1906 թ., Բագուից դուրս է եկել Совѣтъ Съѣздъ-ի Техническій Надзоръ-ի նախկին ծառայող կանտորշիկի պաշտօնով Սարգիս Մարտիրոսեան Մարկոսեանցը հարկնիք գալու համար, որը Ախալքալաքի գաւառի Զիգրաշէն գիւղի բնակիչ է։
Յունվարի 1-ին, նրա ծառայակիցները տեսել են Բալաջարի կայարանում, որտեղից անյայտացել է։
Յիշեալ Մարկոսեանը վերջին ժամանակներս տառապում էր հոգեկան հիւանդութիւնով։ Մօտը ունեցել է 60 ռուբլի փող և անցագիր Եշտիայի շրջանական կառավարութիւնից ի 27 ն դեկտեմբերի 1906 թ. № 284, մի տարի ժամանակով։ Նրա հասակը միջակ է, երեսի գոյնը թուխ, քիթը սուր, աչքերը ներս ընկած և բեխերը երկար։ Խնդրվում է, ով գիտէ նրա ուր լինելը, յայտնել մեզ հետեւեալ հասցէով։
Гор. Ахалкалаки Микиртичу Узунянцъ.
օրամէջ 2—3

Մի չքաւոր ընտանիք,
որը վերջին հայ-թուրքական ընդհարումներից փախել է Թիֆլիս, ընակվում է մի խոնաւ սենեակի մէջ առանց անկողնի և առանց հագուստի։ Դիմում է բարեգործներին օգնել նիւթապէս։ Նուէրներ կարելի է ուղարկել Բեբուտովսկի պերէուլօկ № 12, Յարութիւն Մարտիրոսեանցին։
2—2

„ԻՐԱՒՈՒՆՔ“
ԼՐԱԳԻՐ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Բուլղարիոյ Վառնա քաղաքին մէջ կը հրատարակվի ամեն չորեքշաբթի և շաբաթ օրերը, զուտ հայկական և անկախ թերթ մը են սա, որ կը շարունակվի անընդհատ տասներկու տարիներէ ի վեր։
Բաժնեգին է Ռուսաստանի և Պարսկաստանի համար 5 ռուբլի կանխիկ։
Հասցէն՝ Redaction du journal «Iravounk» (Bulgarie) Varna.
8—8

Լոյս տեսաւ
ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Մասն առաջին, ա. տարի
ԿԱԶՄԵՑ Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Գինը 50 կոպ.
Դիմաւորով գնողներին բաւարար զեղչ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну. 5—5

Վաճառվում են
Յ. Ա. Ր. ԵՍԱՅԵԱՆԻ
ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ
Պատկեր հայ-թուրքական կռիւներից, գինը 7 կ.
Միւռնոյի դագաղում
Պատկեր հայ-թուրքական, կռիւներից պատկերազարդ, գինը 7 կոպ. Նոյն հեղինակի Մայցեալ բոլոր աշխատասիրութիւնները կարելի է ստանալ՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցից կամ հեղինակից, Թիֆլիս 5 գ. Մոգնինսկայա ул. № 7։
Շուտով լոյս կը տեսնի «Մշտական զօրք և միլիցիա» Պիմէնօվի։ օրամ. 2—5

Լոյս տեսաւ
Ա. Ն. Ա. Զ. Ա. Տ. Ի
„ԻՆՉ Է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ“
48 երես
Գինն է 10 կոպ.։ Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում և հեղինակի մօտ։
5—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵՒԱՆՑՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
87—100

„ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ“
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՑՆԵՐԱԶՈՒԿԻ
Ձեռնարկ մայրերի եւ դաստիարակչուհիների համար
ՆՕՏԱՆԵՐՈՎ ԵՒ ՆԿԱՐՆԵՐՈՎ
ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ
Ուսուցչուհիներին և ուսուցիչներին՝ 1 ր. 80 կ.
Տան օրինակից աւել գնող գաւառական գրավաճառներին մեծ զիջում։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Михайловская ул. № 138. օրամէջ 1—10

Ներկայացուցիչ Թիֆլիսի համար՝ Марксъ Познеръ въ Лодзи.
(16, 22, 15) 3—3

Բացված է բաժանորդագրություն
ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելի յաւելուած» անուան տակ։
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատիկան համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԴԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՈՊԵԿ
Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետեւեալ գեղարուեստական նկար պրէմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն եւ 3) Խաղաղութիւն
Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները։ Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրէմիան № 4—ԴԵՐԻՆԵՐ և զատկական պրէմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, շքեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՍԱՇԵՍ Բ.։
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար պրէմիաները առանձին արժեն հատը 50 կոպէկ։ Մեծադիր գունաւոր նկար պրէմիան 3 ռուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli»։ Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը։
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան
(եր. հինգ. և շաբ.) 41—6

1907 годъ **6 годъ изданія**
Открыта подписка
на еженедѣльный, иллюстрированный, практическій журналъ
МОЛОЧНОЕ ХОЗЯЙСТВО,
Скотоводство, свиноводство, травосѣяніе, луговодство.
ПРОГРАММА ЖУРНАЛА:
Техническія и общественныя условія производства и сбыта молока, масла, сыра и всѣхъ другихъ продуктовъ молочнаго хозяйства; использованіе отбросовъ молочнаго хозяйства; содержаніе и кормленіе рогатаго скота; производство корма (луговодство, травосѣяніе, культура корнеплодовъ); выпойка телятъ и откормъ свиней; счетоводство молочнаго хозяйства.
Журналъ предназначенъ для широкой массы хозяевъ-практиковъ.
Въ годъ 52 №№ за 3 р.—съ пересылкой.
½ года—1 р. 75 к., 3 мѣс.— 1 р.
Разсрочка годовой платы: по р. при подпискѣ, къ 1 марта и къ 1 іюня.
Подъ той же редакціей издается съ 1907 г.
„Научный Обзоръ Молочнаго Хозяйства“
объединяющій въ себѣ **всѣ научныя работы, открытія и изслѣдованія** въ области производства молочныхъ продуктовъ, молочно-хозяйственныхъ машинъ и приборовъ и кормленія и содержанія с.-х. животныхъ, а также вопросы молочно-хозяйственнаго образованія.
Цѣна въ годъ (4 выпуска) 2 р.
Сотрудниками журналовъ „Молочное Хозяйство“ и «Научный обзоръ Молоч. Хоз.» состоятъ профессора с.-х. институтовъ, спеціалисты и инструкторы молоч. хоз. и скотоводства и рядъ выдающихся практиковъ-хозяевъ и мастеровъ мол. хоз.
Ред.-изд. **В. И. Лемусъ,**
ассистентъ Московскаго с.-х. института.
Пробные №№ «Мол. Хоз.» высылаются безплатно.
Подписка принимается во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ и въ конторѣ журналовъ:
Москва, Долгоруковская, 100
5—5

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5.